

ժամանակ «առաքաստի համար մեծամեծ տուներու մէջ կը յատկացուէր «սենեակ» մը: Իսկ պարզ բնակարաններու մէջ, ուր հասարակաց ննջարան ունէին, մեծ վարագոյրով մը կը զատէին զայն: Այս նպատակով քահանաներ երբեմն փոխ կու տային «եկեղեցւոյ վարագոյրը», որուն համար Ս. Սահակի Կանոնները կը սպառնան կարգազուրկ ընել զանոնք», կը գրէ Հացունի¹²⁸: Նորահարսին յատկացուած «առաքաստ»-ի սենեակը կը կղզիացնէր նորահարսը ընտանիքի անդամներէն ու ազգականներէն, որոնք դիւրաւ չէին կրնար մօտենալ անոր: Չորրորդ դարէն ունինք օրինակ մը Տիրիթ Արշակունի, Գնելի հօրեղբորորդին, Գնելի նորապսակ կինը՝ Փառանձեմը տեսնելու համար մեծ դժուարութեան կը հանդիպի. «Անգանէր ի դաղտագողօնս»¹²⁹: Հին հայ նորահարսին սենեակի ներքին կազմի մասին գաղափար մը կու տայ Հացունի, գրելով. «Նուազ չէ անոնց ննջասենեակաց պերճանքն ալ, ուր ձգուած կան «Բազմադիմի անկողինք»¹³⁰ կամ «նկարեալ պատշգամբք»¹³¹ այն է զանազան ձիերով ու գոյներով յօրինուած ու առաւելագոյն ճոխութեան պարագային գահոյք ալ կոչուած¹³²: Այս կարասին կը կազմուի երկու մասերէ՝ մահիճք կամ մարձակ (անդ), որ է ներքին քառոտանի ու բարձր մասը, եւ ծանօթ բրդեղէն անկողինն, որ անոր վրայ կը տարածուի: Ասոր վրայ հաւանական էր, ինչպէս ուրիշ տեղեր, նաեւ մեր քով դնել պաստառակալը կամ սաւանը, իսկ սովորական բարձր կամ սնարը գլխին ներքեւ եւ մարմնոյն վրայ վերմակը, որ ըստ աստիճանի անձին կրնայ եւ շատ հարուստ լինել, օրինակ «ոսկեհոլ» եւ գա-

հոյքն ալ «ակնակապք եւ համակ ոսկեղէնք», ինչպէս արքունիքի մէջ¹³³:

Ըստ ակնարկութեան Եղիշէի, տիկնանց գահոյից վրայէն ցերեկը կը վերցնէին անկողինը, զանոնք գործածել կարենալու համար եւ երեկոյին դարձեալ «անկողնարկ լինէին»¹³⁴: Նորեկ հարսերու սենեակներու մէջ ասոնց հետ կը տեսնուին «սրահակք եւ սրսկապանք» կոչուած վարագոյրներ ալ. սրահակը կախուած դրան ետեւ¹³⁵ ի զգուշութիւն դրան բացուելու եւ փակուելու պահուն եւ սրսկապանը խորանաձեւ ծածկելով անոնց մահիճք: Հայ բանակին մէջ անգամ կը տեսնէր պատմիչն «զհովանոցս եւ զսրահակս եւ զգահոյս եւ զանկողինս»¹³⁶:

Հարսանեկան սենեակը կամ «առաքաստը» յետին դարերու մէջ կոչուած է նաեւ «հարսնարան»¹³⁷: Երբ կը հասնէր հարսին հոն առաջնորդելու ժամը, հարսնաձու աղջիկներ «թմբկօք եւ պարուք» կ'առաջնորդէին հարսը¹³⁸: Խորենացւոյն ալ ծանօթ էին «առաքաստի երգք», զորս կ'երգէին դեռ իր օրով¹³⁹: Թէ ինչ էին այդ երգերը, աւանդած չէ Խորենացի:

Հարսանիքի երրորդ օրը կը վերցնէին հարսին քողը: Իսկ ութերորդ օրն ալ կ'առնէին պսակները¹⁴⁰, զոր 1446-ի Մաշտոցը «յաւուրն երրորդի» կը դնէ:

(Շարունակելի)

133 Եղիշէ, անդ, էջ 134:
 134 Անդ, անդ, էջ 156:
 135 Հմմտ. Ելք, ԻԶ 36, ԼԸ. 18, ԼԹ. 38, Խ 26, 31:
 136 Փաւստ, էջ 135: Հացունի, Հայրնիս, էջ 17-18:
 137 Արիստակէս Լաստիվերտացի, Պատմութ., Վեցտիկ 1844, էջ 40:
 138 Խորենացի, Մատեն., Վեցտիկ, 1865, էջ 311:
 139 Խորենացի. Գլ.ԿԸ: Հացունի, Հայրնիս, էջ 78:
 140 Զագավանի ժողով, Գեորգ Եզն., էջ 256, 257:

128 Թեոդիկ, Ամէն. Տարեգիրքը, 1912, էջ 207:
 129 Փաւստ., Վեցտիկ 1933, էջ 125:
 130 Ղազար Փարպեցի, Պատմ., Վեցտիկ, 1873, էջ 332:
 131 Եղիշէ, անդ, էջ 97:
 132 Յովն. Ոսկեր. Պատմ. Ա., էջ 816:

ՊՐՈԿՂ ԿՈՆՍՏԱՆԳԻՆՈՒՊՈԼՍԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՃԱՌԵՐԻ ԸՆԹԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Յակոբ Բեօտեան

Պրոկղ՝ Կ. Պոլսի պատրիարքը աթոռը գրադեցրել է 434-446 թթ: Եղել է աշակերտն ու մերձաւորագոյն բարեկամներից մեկը ս. Յովհան Ոսկեբերանի, որի նշխարները փոխադրել է Կ.Պոլիս 439 թ.: Լինելով ս. Կիւրեղ Աղեքսանդրացու խոհակիցը՝ 429 թ. նա հրապարակաւ դատապարտում է Նեստորի և Թէոդորոս Մոփսուեստացու վարդապետութիւնը: Պատահական չէ, որ Պրոկղն արդէն այդ շրջանում, նախքան Երրորդ տիեզերական ժողովի գումարումը, իր քարոզներում հետևողականօրէն շեշտում է Մարիամ «Աստուածածին» լինելն ի հակակշիռ նեստորեան պնդումների: Հականեստորեան և հակաթէոդորոսեան պայքարի արձագանքները լսելի են հայոց հասցեագրած նրա նշանաւոր Հաւատոյ թղթում¹: Այստեղ, ինչպէս նաև՝ նրա ճառերում առկայ վարդապետական մտածումները որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում Երրորդ տիեզերական ժողովի և Քաղկեդոնի ժողովի միջակայ ժամանակահատուածում քրիստոսաբանական ընկալումների հետազօտութեան համար: Նրա քրիստոսաբանական ձևակերպումներն ակներևօրէն հիմնուած են ս. Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետական ժառանգութեան վրայ, որի հիմնադրոյթները Պրոկղի ջանքերով ի սպաս են դրւում օ-

րուայ հրատապ խնդիրների լուծմանը: Քրիստոսաբանական այս ոգին ներկայ է ինչպէս Հայոց յղած Հաւատոյ նամակում (« Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սահակ հայրապետ Հայոց եւ առ սուրբն Մաթղոց»), այնպէս էլ նրա ճառերում:

Պրոկղի անունով մեզ են հասել թուով քսանմեկ ճառեր, որոնք, ըստ նախնեաց վկայութիւնների, շատ նման են Յովհան Ոսկեբերանի և Բարսեղ Կեսարացու համարնոյթ երկերին: Նրա գրչին են պատկանում Մարիամ Աստուածածին², Աստուածայտնութեանը³, Պայծառակերպմանը⁴, Ծաղկազարդին⁵, Զատիկին⁶, Հոգեգալստեանը⁷, Պօղոս, Անդրէաս առաքելներին, Յովհան Ոսկեբերանին⁸, Պարասկեա կոյսին⁹ նուրիւած ճառերն ու ներբողները: Ծառերն օգտակար են ժամանակաշրջանի աստուածաբանական մտքի ուսումնասիրման համար: Մարիամ Աստուածածինն նուիրուած ճառերը շահեկան են մասնաւորաբար քրիստոսաբանական կարևոր դիտումներով: Սուրբ ծննդեան ճառերից երկրորդում խօսւում է քրիստոնէական տօների հոգևոր նշանակութեան, իսկ Հոգեգալստեան ճառում՝ Ս. Հոգու աստուածութեան վերաբերեալ: Ինչպէս իրաւացիօրէն նկա-

1 Տե՛ս PG, 65, 855B-873B. հայ. թրգմ. Գիրք թղթոց, խմբ. Ն. Արք. Պողարեան, Երուսաղէմ, 1994, էջ 30-40: Թղթի աստուածաբանական քննութիւնը տե՛ս С.А. Медведев, Богословие „Томоса Армянам., свт. Прокла Константинопольского – "XV Ежегодная Богословская конференция. 2005", с. 114-117:
 2 Տե՛ս PG, 65, 679-692
 3 Անդ, 757-763:
 4 Անդ, 763-772:
 5 Անդ, 772-777:
 6 Անդ, 789-796, 796-800, 800-805:
 7 Անդ, 805- 817:
 8 Անդ, 817-821, 821-828, 828-833:
 9 Անդ, 781-788:

տուած է, Պրոկղի հռետորական արուեստի մէջ մեկտեղուած են բարսեղեան խստութիւնն ու ոսկեբերանեան մեղմութիւնը: Խօսքն աչքի է ընկնում բարեզարդ պէսպիսութեամբ, տուժում պարզութիւնը¹:

Հայ իրականութեան հետ կենդանի կապն ու կիւրեղեան վարդապետութեան որդեգրումը պատճառ են դարձել, որ արդէն Ե. դարում Պրոկղ Կ. Պոլսեցու ճառերը հայացուեն: «Ճառընտիր» ժողովածուներում կենցաղավարում են նրա հետեւեալ ճառերի հայերէն թարգմանութիւնները.

Ա/ Երանելոյն Պրոկղի արքեպիսկոպոսի Կոստանդնուպոլսի ի սուրբ ծնունդն Յովհաննու Կարապետին (ՄՄ, ձեռ. 7489, 48բ-54ա):

Բ/ Երանելոյն Պրոկղի եպիսկոպոսի Կոստանդնուպոլսի յԱստուածայայտութիւն (տպ. Հ. Գ. Սարգիսեան, «Բազմավէպ», 1934, էջ 5-8, ՄՄ, ձեռ. 996, թ.125բ-127բ, 2190, թ. 270ա-274 ա)

Գ/ Խաւսք երանելոյն Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի ի մեկնութեան մարգարէին Ջաքարիա ի բերան ճրագացն, որ ի վերայ աշտանակին, որ արիմակէր զսուրբ Աստուածածինն զմիշտ կոչսն Մարիամ (ՄՄ, ձեռ. 1523, թ. 46բ-47ա, 993, թ. 48բ-49ա):

Դ/ Խաւսք Պրոկղի եպիսկոպոսի ի նստելն Նեստորի ի մեծ եկեղեցուցն Կոստանդնուպոլսի յասելն, եթէ Աստուածածին է կոչսն Մարիամ, եւ ծնեալն ի նմանէ ոչ Աստուած մերկ եւ ոչ մարդ սուկ, այլ Եմմանուել, այս է՝ Աստուած եւ մարդ յերկուց բնութեանց միացեալ առանց խառնակութեանց եւ առանց փոփոխմանց է մի Աստուած Տէր մեր Յիսուս Քրիստոս (ՄՄ, ձեռ. 1525, թ. 45բ-48բ, 993, թ. 52ա-53բ, 1798, թ. 410բ-416ա)

Ե/ Նորին Պրոկղի եպիսկոպոսի Կոստանդնուպոլսի յաւետիս սուրբ կոչսն Աստուածածին (ՄՄ, ձեռ. 1525, թ. 48բ-49բ,

3772, թ. 82բ- 85ա, տպ. M. van Esbroeck, «Բազմավէպ», 1977, էջ 723-725, ըստ ՄՄ, ձեռ. 993, թ. 50աբ)

Զ/ Երանելոյն Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի ասացեալ ի խորհուրդ տերուանական Խաչին (ՄՄ, ձեռ. ՄՄ ձեռ. 993, թ. 613բ-614բ)

Է/ Պրոկղի եպիսկոպոսապետի Կոստանդնուպոլսի Աերթողեան ի սուրբն Ստեփանոս Նախավկայն ասացեալ (ՄՄ, ձեռ. 5349, թ. 173ա-179բ, 6196, թ. 497ա-499ա, 3791, թ. 699բ-703ա)

Ը/ Երանելոյն Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի Աերթողեան ի սուրբ աւետարանին Ղուկաս (ՄՄ, ձեռ. 993, թ. 726բ, Վենետիկ, ձեռ. 210, թ.76բ-78բ)

Թ/ Պրոկղի Աերթողեան ի սուրբ հայրն Յոհանն Ոսկեբերանն (Վենետիկ, ձեռ. 205, թ. 134ա-141ա, 248, էջ 240-251)

Ժ/ Պրոկղի ՝ Յաղագս կաղանդաց, եթէ որպէս ցուցանին (ՄՄ, ձեռ. 1973, թ. 201աբ, 1999, թ. 89աբ)

Հայերէն թարգմանութիւնները գլխաւորաբար համընթաց են յունարէն բնագրերին: Բացառութիւն են կազմում Ե, Զ միաւորները: Համաձայն M. van Esbroeck-ի, Ե միաւորը ոչ այլ բան է քան Պրոկղի նախնական (կարճ) ներքողի միայն հայերէնով յայտնի տարբերակը, որ յետագայում Պրոկղի իսկ կողմից ընդլայնուել և յարմարեցուել է Սուրբ ծննդեան խորհրդին: Աւելի ուշ այդ երկու տարբերակները ներդաշնակելով իրար է կցել Կեղծ-Գրիգորը²:

Ինչ վերաբերում է Ժ միաւորին, ապա այն օգերեւութաբանական գուշակութիւնների վերաբերեալ մի տեղեկատու է, որ, ամենայն հաւանականութեամբ կեանքի է կոչուել Հայ իրականութեան մէջ և վերագրուել Պրոկղին:

1 Տե՛ս Историческое учение об отцах церкви Филарета (Гумилевского) Архиепископа Черниговского и Нежинского, М. 1996, т. 3, с. 69:

2 Տե՛ս M. van Esbroeck, Une courte Homélie Mariale de Proclus conservée en Arménien, - Բազմավէպ, 1977, էջ 718-723:

Ոսկեբերանի ժառանգութեան հետ ունեցած նմանութիւնը պատճառ է դարձել, որ, թերևս գրչական միջամտութեամբ կամ շփոթով Պրոկղի «Ի խորհուրդ տերուանական խաչին» (Զ միաւոր) ճառի հատուածները խառնուելով ներհիւսուեն Ոսկեբերանի «Ի խաչելութիւն Տեառն» ճառին¹: Թերևս յետագայում ներհիւսուած այդ հատուածներն ամբողջապէս ընդգրկուել են Եղիշէի «Ի խաչելութիւն Քրիստոսի» ճառի մէջ՝ փաստօրէն զբաղեցնելով ճառիս վերջնամասը. «Վասն այսորիկ կոչեմ զսա թագաւոր... Եւ ապա զի՞նչ. եթո՞ղ նոցա զմեղան. եթող, եթէ զղջացեալ եւ ապաշխարեալ էին»²:

Միայն հայերէն թարգմանութեամբ յայտնի են Ա, Ե-Ը ճառերը (ի բաց առեալ Զ-ի ոսկեբերանեան հատուածները, որոնք պահպանուած են ներկայ հրատարակութեան մէջ՝ նրա՝ իբրև ճառընտրային միաւորի՝ ամբողջականութիւնն անխաթար պահելու համար): Ըստ այսմ դրանք ունեն բնագրի արժէք:

Պրոկղի ճառերում հանդիպող քրիստոսաբանական խտացումները թոյլ են տուել Հայ մատենագիրներին դրանք ներմուծել դաւանաբանական ժողովածուներում³: Բացի Հայոց յղուած Հաւատոյ գրից, Պրոկղի ժառանգութիւնից վկայաբերուած հատուածներ առկայ են «Կնիք հաւատոյ» (Է. դ.),

Խոսքովիկ Թարգմանչի (Ը. դ.) «Առ այնուսիկ, որ ասեն բնութեամբ անձեւ, անսկիզբն ընկալեալ մարդկութիւն Աստուած Բան ի Կուսէն», Մաթուսաղայի (Է. դ.) «Առ թագաւորն Հերակլ վասն հաւատոյ», Ստեփանոս Սիւնեցու (Ը. դ.) «Վասն անապականութեան մարմնոյն», խաչիկ Արշարունի Հայրապետի (Ժ.դ.) «Պատասխանի թղթոյն մետրոպոլտին Սեբաստիոյ», Անանիա Սանահնեցու (ԺԱ. դ.) «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց», Պողոս Տարօնեցու (ԺԲ. դ.), «Թուղթ ընդդէմ Թէոփիստէ Հոռոմ փիլիսոփային», Վարդան Այգեկեցու (ԺԲ.- ԺԳ. դ.) «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ», Յովհաննէս Պուզ-Երզնկացու (ԺԳ. դ.) երկերում և այլուր:

Այսպէս, «Կնիք հաւատոյ» դաւանաբանական ժողովածուում Պրոկղի անունով հատուածները⁴ բացակայում են հայերէնով յայտնի հրատարակուող ճառերում:

Մաթուսաղայի յիշեալ թղթում վկայաբերուած փոքրիկ արտայայտութիւնը («Յորում աստուածապէս դրոշմեալ ի միաւորութեանն պատմուճան»⁵) մասն է Տիրամօր նուիրուած «Խաւսք Պրոկղի եպիսկոպոսի ի նստելն Նեստորի ի մեծ եկեղեցուցն Կոստանդնուպոլսի...» ճառի (Դ), ուր կարդում ենք «անճառաբար հանգեալ միաւորութեան պատմուճանն»⁶: Դաւանաբանական կարևոր դիտումներով աչքի ընկնող այս ճառը, որ խօսուել է Եփեսոսի Տիեզերական ժողովում, իբրև հեղինակաւոր սկզբնաղբիւր, բազմիցս վկայակոչուել է Հայ դաւանաբանական գրականութեան մէջ:

1 Հմմտ. «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի Մատք», Վենետիկ, 1861, էջ 209-211 («Վասն այնորիկ կոչեմք զնա թագաւոր...», «Այլ լուր այսուհետեւ ըստ կարգի. «Յայնժամ, ասէ, ե՞րբ. Յորժամ գայցէ... սարսեալ եւ դողացեալ կան առաջի վասն Դատարիին», «Եւ վասն այնորիկ ոչ իջանէր ի Խաչէն, զի Որդի Աստուծոյ էր... Ապա զի՞ եթող անցա զմեղաւ. եթող եթէ կամեցեալ էին ասպաշխարել»):

2 ՄՄ. ձեռ. 993,թ. 453բ-54ա

3 Քրիստոսաբանական խնդիրներում Պրոկղի վայելած հետազոտութեան մասին է վկայում այն փաստը, որ նրա ժառանգութիւնից հատուածներ տեղ են գտել տակաւին Տիմոթէոս Կուրի Հակաճառութեան մէջ, տպ. Էջմիածին, 1908:

4 Տե՛ս «Կնիք հաւատոյ Ընդհանուր Սուրբ եկեղեցուց...» աշխտ. Կարապետ եպիսկոպոսի, ՄՀ, հտ. Դ, էջ 123, 209, 300 :

5 Տե՛ս ՄՀ, հտ. Դ, էջ 421

6 Տե՛ս աստ. Դ, ա, նաև Աստուածածնի մասին, աշխ. Թ. Տասնապետեան, Անթիլիաս, 1996, էջ 226:

Խոսքովիկ Թարգմանչի աշխատութեան մէջ բերուած հատուածը («ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց շփոթութեան մնաց միաւորութիւնն»¹) դարձեալ վկայաքաղուած է քրիստոսաբանական գորաւոր թափանցումներով աչքի ընկնող այդ ճառից. «ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց խառնակութեան եկաց մնաց միաւորութիւնն»²:

Ստեփանոս Սիւնեցու «Վասն անապականութեան մարմնոյն» երկում այս ճառից քաղուած են երեք հատուածներ.

ա. «Վասն այնորիկ եւ Գաբրիէլ ի տալ զաւետիս Մննդեանն ասէ. Նա ինքն փրկեաց զժողովուրդս իւր յամենայն յապականութենէ, իսկ արդ, աշխարհս ոչ կարէ փրկել ի մեղաց, որ ինքն ապականութեամբ յերկիր անկեալ է»³:

բ. «Եւ երանելին Պրոկղ ասէ ի Տաւնականին». Եթէ ոչ էր կոյս մնացեալ Մարիամայ մաւր Տեառն՝ սոսկ մարդ էր ծնեալն, եւ ոչինչ հրաշափառագոյն ծնունդն, ապա եթէ զկնի ծնանելոյն եկաց մնաց կոյս՝ նա անապականաբար ծնաւ»⁴:

գ. «Քանզի էմմանուէլ զբնութեանն զդրունս երաց որպէս զմարդ եւ զկունութեան զփակս ոչ խզեաց որպէս զԱստուած, այլ այնպէս յարգանդէն ել արտաքս, որպէս ընդ լսելիսն ի ներքս եմուտ. այնպէս ծնաւ որպէս յղացաւն, անախտաբար եմուտ եւ առանց ապականութեան ել»⁵:

Խաչիկ Արշարունու «Պատասխանի թղթոյն մետրոպոլիտին Սեբաստիոյ» գրութեան մէջ խմբագրաբար վկայակոչուած են Պրոկղի ճառի տարբեր հատուածները

հետեւեալ կերպ. «ա) Կուսական է տաւնս, ասէ, կոչեաց զմեզ ի միասին այսր սուրբ եւ Աստուածածին կոյսն Մարիամ անաղտ կուսութեան բաժակն՝ բանաւոր դրախտն երկրորդ Ադամայ, գործարան միաւորութեան բնութեանցն, բ) սարսափելի տնաւրէնութեան ոստայն, յորում անճառաբար անկաւ միաւորութեանն պատմուճան: գ) Նա անապականաբար ծնաւ, եւ դրաւքն փակելովք անխափան ի ներքս եմուտ, զորոյ զմիութիւնն բնութեանցն թովմաս աղաղակեաց. «Տէր իմ եւ Աստուած իմ»⁶: Վկայութեանս ա եւ ք ենթահատուածները քաղուած են ճառիս ա ենթաբաժնից, իսկ գ-ն՝ ք ենթաբաժնից:

«Բնութեամբ անչարչարելին եղեւ գթութեամբ բազմաչարչարելի»⁷ բառացիորէն նոյնական է ճառի ո ենթաբաժնի սկզբին:

«Գթասէրն Աստուած եկն, որ միշտ մերձն էր, եւ ետ փրկանս զիւր արիւնն եւ գնեաց զմեզ, ոչ է սոսկ մարդ, ով հրեայդ»⁸: Սա խմբագրումն է ճառի հետեւեալ հատուածի. «...գթասէրն Աստուած, այլ եկն, որ միշտ մերձ է, եւ ետ փրկանս զիւր արիւնն, ետ փոխանակ ազգիս փրկանս մահու, զոր Կուսէն զգեցաւ զմարմինն եւ գնեաց զաշխարհս: Ի նզովից աւրինացն ազատեաց, մահուամբ զմահ խափանեաց, գնեաց զմեզ, ոչ է սոսկ մարդ, ով հրեայ» (է-ը):

«Եթէ այլ ոք է Քրիստոս եւ այլ ոք՝ Աստուած Բանն, ոչ եւս Երրորդութիւն: Մի՛ պատառեր զտնաւրէնութեան պատմուճան զիվերուստ անկեալն, մի՛ աշակերտի Արիոսի, վասն զի նա ամբարշտելովն զբնութիւնսն հատանէ: Դու զմիաւորութիւնն մի՛ բաժաներ, զի մի՛ բաժանեցիս

1 Տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 685 [35]
 2 Տե՛ս աստ, ը :
 3 Տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 444 [21]: Սա, թում է, իմաստային վերապատումն է հետևեալ տեղի. «Մարդ փրկել պնուհետն ոչ կարէր, վասն զի ի ներքս անկեալ կայր պարտուց մեղացն»:
 4 Աճդ, էջ 453 [97] = ք
 5 Աճդ, էջ 453 [98] = ժ

6 Տե՛ս ՄՀ, հտ. Ժ, էջ 669-670 [60-61]
 7 Աճդ, էջ 670 [62]:
 8 Աճդ, էջ 670 [63]:

յԱստուծոյ»¹ (ը): Բառացիորէն նոյնական է սկզբնաղբիւրին:

Անանիա Սանահնեցու Հակաճառութեան մէջ վկայաբերուած է մի հատուած այս նոյն ճառից. վկայութիւնս սակայն, ձոյլ ամբողջական չէ. այն բաղկացած է երկու ենթահատուածներից. ա) «Եթէ ոչ բնակեալ էր Բանն յարգանդ Կուսին անապական մարմինն սուրբ յԱթոռ փառաց, զի բնութեամբ անչարչարելի Բանն եղեւ գթութեամբ բազմաչարչարելի ոչ փոփոխամբ եղեւ մարդ, մի՛ լիցի, այլ ողորմութեամբ եղեւ մարդ, բ) զի թէ այլ ոմն է Քրիստոս, եւ այլ ոմն՝ Աստուած Բանն, ոչ եւս Երրորդութիւն, այլ չորրորդութիւն, այլ մի՛ պատառեր զպատմուճանն տնաւրէնութեանն, զի վերուստ անկեալն: Եւ մի՛ աշակերտի Արիոսի, զի անբարշտելովն զբնութիւնն հատանէ: Դու զմիաւորութիւն մի՛ բաժաներ լերկուս բնութիւնս, զի մի՛ բաժանեցիս յԱստուծոյ՝ երկարակ հայրնորթեամբն Անտորաբար»²: Վկայութեանս ա ենթահատուածը գրեթէ բառացի խմբագրումն է ճառի գ եւ ո ենթաբաժնիների հետեւեալ հատուածի. «Եթէ ոչ Բանն էր բնակեալ յարգանդին՝ ոչ նստէր մարմինն ի սուրբ Աթոռն: Եթէ Աստուծոյ թշնամանք են յարգանդն մտանել, զոր ետեղծ, ապա եւ հրեշտակաց թշնամանք են մարդոյն սպասաւորել: Բնութեամբ անչարչարելին եղեւ գթութեամբ բազմաչարչարելի. ոչ փոփոխամբ եղեւ Քրիստոս, քա՛ւ լիցի, այլ ողորմութեամբ մարդ եղեալ հաւատամբ»: Վկայութեանս բ ենթահատուածը քաղուած է ճառի ը ենթաբաժնից. «Եթէ այլ ոք իցէ Քրիստոսն եւ այլ՝ Աստուած Բանն՝ ոչ եւս Երրորդութիւն, այլ՝ չորրորդութիւն: Մի՛ պատառեր զտնաւրէնութեան պատմուճան զի վե-

րուստ անկեալն: Մի՛ աշակերտի Արիոսի, քանզի նա ամբարշտելով զբնութիւնն հատանէ, եւ դու զմիաւորութիւնն մի՛ բաժաներ, զի մի՛ բաժանեցիս յԱստուծոյ»: Ինչպէս ցոյց են տալիս ընդգծուած հատուածները, Հակաճառութեան հեղինակը, վկայութեանս դաւանաբանական սրութիւնն հաղորդելու համար, բնագրին աւելացնում է մի քանի արտայայտութիւններ:

Պօղոս Տարօնեցու «Թուղթ ընդէմ թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային» երկում վկայակոչուած են հետեւեալ հատուածները.

Ա. «Ոչ մարդ աստուածացեալ քարոզեմք, այլ Աստուած մարդացեալ հաւատամբ եւ մի բնութիւն Արիոս: ք) Ինքն ի գոգս Հաւր եւ յորովայնի Կուսին, ի գոգս մաւր եւ ի վերայ թեւոց հողմոց: գ) Ի վերայ Խաչին մածեալ եւ Աթոռն ոչ մերկանայր, ի գերեզմանի էր, եւ գերկինս ձգէր որպէս խորան: Ընդ մեռեալս համարեցաւ, եւ դժոխքն կողոպտեաց»³: Վկայութեանս ա ենթահատուածը քաղուած է ճառի ո ենթաբաժնից, բ ենթահատուածը՝ թ-ից: Միւս՝ գ ենթահատուածը մասամբ իմաստային, մասամբ բառացի խմբագրումն է թ ենթաբաժնի հետեւեալ հատուածի. «Ի Խաչին բեւեռեալ լինէր եւ Աթոռ փառացն ոչ մերկանայր: Ի գերեզմանի եղաւ, եւ գերկինս ձգեաց որպէս վրան: Ընդ մեռեալս համարեցաւ եւ ընդ դժոխս աւերեաց»: Վկայութիւնս դարձեալ դաւանաբանակացուած է ընդգծեալ բառերով:

Պրոկղի այս ճառից շատ վկայութիւններ են բերուած Վարդան Այգեկցու «Գիրք Հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» աշխատութեան մէջ: Ներկայացնենք այդ մատնանիչ անող հատուածները.

1 Աճդ, էջ 670 [64-66]:
 2 Յ. Քեօսէեան, Աստուածաբանական բնագրեր. Ուսումնասիրութիւններ. Ա Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 266:

3 Տե՛ս ՄՀ, հտ. ԺԷ, էջ 413-414 [1010-1014]:

Պրոկղի՝ ի Աստուծոյ Նեւտորի ի մեծ եկեղեցւոջն

Եթէ Աստուծոյ թշնամանք են յարգանդն մտանել, զոր եստեղծ, ապա եւ հրեշտակաց թշնամանք են մարդոյն սպասաւորել: Բնութեամբ անչարչարելին եղեւ գթութեամբ բազմաչարչարելի. ոչ փոփոխմամբ եղեւ Քրիստոս. քա՛ւ լիցի, այլ ողորմութեամբ մարդ եղեալ հաւատամբ: Ոչ մարդ Աստուած եղեալ քարոզեմք, այլ Աստուած մարմին լեալ խոստովանիմք:

Պրոկղի՝ ի Աստուծոյ Նեւտորի ի մեծ եկեղեցւոջն

Մի պատառեր գտնաւրէնութեան պատմութեան զիվերուստ անկեալն: Մի՛ աշակերտիր Արիոսի, քանզի նա ամբարշտելով զբնութիւնն հատանէ եւ դու զմիաւորութիւնն մի՛ բաժաներ, զի մի՛ բաժանեսցիս յԱստուծոյ:

Բանն մարմին եղեւ, եւ ի միասին եկին բնութիւնքն եւ առանց խառնակութեան եկաց մնաց միաւորութիւնն:

Ը.

Ինքն ի ծոց Հաւր, եւ յորովայնի Կուսին: Ինքն ի գիրկս Մաւրն, եւ ի վերայ թեւոց հողմոց: Ինքն ի հրեշտակաց երկրպագեալ լինէր, եւ ընդ մաքսաւորս բազմեալ: Սերովբէքն ոչ կարէին հայել, եւ Պիղատոս հարցանէր: Ծառայն հարկանէր, եւ արարածք սարսափէին: Ի Խա-

Գ.Ղ.

Վարդ. Այգեկցոյ՝ Արմատ հաւատոյ

Նորին ընդդէմ Նեւտորի. Եթէ Աստուծոյ անարգութիւն է յարգանդ գալ, ապա եւ հրեշտակաց անարգութիւն է մարդոյ սպասաւորել, բայց արդէ ակն ըստ բնութեան անախտակիր, եղեւ ի ձեռն գթոյ յոքնախտակիր:

Նորին. Ոչ ի նահատակութենէ եղեւ Աստուած Քրիստոս. քա՛ւ լիցի, այլ գթովն եղեւ մարդ՝ Աստուած ելով, որպէս հաւատամք, զի ոչ մարդ աստուածացեալ քարոզեմք, այլ Աստուած մարդացեալ խոստովանիմք:

Էջ 143¹

Թ.

Վարդ. Այգեկցոյ՝ Արմատ հաւատոյ

Պրոկղի Կոստանդնու հայրապետի ի Անթրոնեան Կուսին

Մի՛ պատառեր գտնաւրէնական պատմութեանն, զի Արիոս հատանէ գէական բնութիւնն, դու զմիաւորութիւնն մի՛ բաժաներ, զի մի՛ բաժանեսցիս յԱստուծոյ:

Նորին.

Բանն մարմին եղեւ, եւ ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց խառնակութեան մնաց միաւորութիւնն:

Ինքն ի ծոց Հաւր, եւ յորովայնի Կուսին: Ի խաչին բեւեռեալ եղեւ, եւ յԱթոռ փառաց ոչ մերկանայր:

Էջ 142

Նորին, յետ սակաւոց

Անվայրափակ Բանն, որ ի ծոց Հաւր

1 Տե՛ս Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան Արմատ հաւատոյ, աշխտ. Տ. Ծաֆէ քհն. Հայրապետեանի, Ներածութիւնը Թակոբ Քեօւեանի, Եր., 1998:

չին բեւեռեալ լինէր, եւ Աթոռ փառացն ոչ մերկանայր:

պարունակի փոքրիկն տղայիկ զսերովբէսն սասանեցուցեալ եւ ի Պիղատոսէ հարցափորձեալ:

Էջ 143

Նորին, յետ սակաւոց վկայութիւնը ճառում իրապէս ոչ թէ յաջորդում, այլ նախորդում է իրենից առաջ եղած քաղուածքին: Այն բառացիորէն չի համապատասխանում ճառին. նրա «Անվայրափակ Բանն...փոքրիկ տղայիկն» հատուածը բացակայում է այնտեղ, իսկ յաջորդող «զսերովբէսն...հարցափորձեալ» հատուածը ոչ այլ բան է քան իմաստային վերապատումը ճառի «Սերովբէքն ոչ կարէին հայել, եւ Պիղատոս հարցանէր» (Թ) բառերի: Ինչպէս դժուար չէ համոզուել, Նորին. յետ սակաւոց վկայութեանը նախորդող և յաջորդող քաղուածքները մասամբ բառացի, մասամբ իմաստային յառաջաբերութիւններն են ձառի համապատասխան հատուածների:

Յովհաննէս Պրոկղ-Երզնկացի «Սքանչելի եղեւ գիտութիւն քո յիս» (Սղմ. ՃԼԸ 6) բնաբանով դաւանաբանական ճառում պատշաճ է նկատում մի նախադասութիւն վկայակոչել այս ճառից. «Ի միասին եկին բնութիւնքն, եւ անչիփթ մնաց միաւորութիւնն»¹ :

Ներսէս Լամբրոնացի «Եւ հարկ է համարում դիմել Պրոկղի մատենագրական ժառանգութեանը. Իր «Ատենաբանութիւն» երկում նա վկայակոչում է Պրոկղի՝ Ստեփանոս Նախավկային նուիրուած ներբողի «Ընդ արեգակն արուսեակ ծագեալ» բառերը²:

1 Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւն, հտ. Ա. Ժառեր եւ քարոզներ, բնագրերը հրատարակութեան պատրաստեցին Արմենուհի Երզնկացի-Տէր-Սրապեանը եւ Էդուարդ Բաղդասարեանը, Ներածականները Էդուարդ Բաղդասարեանի, Եր., 2013, էջ 197 = Ը: Վկայութիւնս բնագրային կերտուածքով նոյնամասն է Խոսրովիկ Թարգմանչի վկայաբերածին, ինչը նշանակում է, որ Երզնկացի այս բերել է Խոսրովիկի երկի միջնորդութեամբ:

2 Տե՛ս Ատենաբանութիւն, Վեցերկ, 1812, էջ 132:

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՊՐՈԿՂԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՒՊՈՍԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ Ի ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ՝

Այսաւր ծագեցաւ ուրախութիւն նախաստեղծին Ադամայ:

Այսաւր ազատութիւն պարգեւեցաւ նախամաւրն Եւայի:

Այսաւր Ձաքարիա Հայրն Յովհաննու ձայն աւետեաց մատուցանէ նախահաւրն, եւ մայր նորին Եղիսաբեթ իւրում նախամաւրն, եւ բնութիւն ամենայն կանանց եւ ծնունդ նոցա յառաջընթաց Կարապետ լուսոյ, եւ արեգակն ծագէ ի դժոխս, վասն զի ստեղծեալն ի հողոյ ած զմահ աշխարհի ի ձեռն դաւաճանութեան աւճին նուագարանաց եւ պատրողական բանից: Իսկ Յովհաննէս աստուածստեղծագործութեան տունկ ի մեռեալ մարմնոյ եւ ի ցամաքեալ Հիւթոց ի կարծր եւ յապառաժուտ վիմէ այսաւր ընծիւղեցաւ ծաղիկ զուարթ եւ սաղարթաւոր, զոր ոչ երբէք բուսոյց երկիր պարարտ ոռոգեալ ի ջուրոց ի սկզբանէ աշխարհի: Ձայսպիսի տունկ եւ պատգամաւոր բանից Աստուծոյ եղեւ Հրեշտակապետն Գաբրիէլ:

Յոյժ պարծին այսաւր ծնողք Կարապետին ի վերայ նախահաւրն եւ մաւրն տիեզերաց, եւ մարմինք նոցա գեր ի վերոյ գտանին հողոյն, յորմէ գոյացան մարդիկք: Քանզի հողն ի հրամանէ Բանին Աստուծոյ ծնաւ զայնոսիկ, որք պատրեալ ի չարանախանձ դիւն փակեցին զգրախտն², որ պատրաստեցաւ վայելել առանց վաստակոց ամենայն ստեղծուածոց: Իսկ սոքա ցամաքեալ ոսկերք եւ պակասեալք ի ծննդական զաւրութեանց ծնան պտուղ լինել հաղորդ ճանապարհի այնմ, որ եբաց զգրախտն փակեալ յառաջ քան զամս հինգ հազարաց, եւ

յառաջընթաց եղեւ նմա, որ աւարողն էր դժոխոց, յորում բնակեալ կային բազմութիւնք բնութեան ամենայն մարդկան: Եւ ձայն բարբառոյ եղեւ յանապատի՝ պատրաստ առնել միշտ զճանապարհս նորա (տե՛ս Ես. Խ 3, Մտթ. Գ 3): Ով զարմանալոյ սքանչելեացն. ի հողոյ գոյացաւ բնութիւնս մեր, վասն զի յարմարեցաւ յաւերժութեան անտեսակ տարերց եւ շաղաշարեցաւ հիւսուածովք կարգաց ոսկր առ ոսկր դարձեալ, եւ մերձեցեալ եւ շունչ եղեալ ի նոսա զգայական: Եւ լոյս տուեալ ի շնորհաց լոյսին լուսատու լինել մարմնոյ, եւ հրամայեցաւ գիտովք վայելչանալ իբրեւ զգեստիւք, եւ բովանդակ մարդ լինել կատարեալ արու, եւ ի կողից նորոգեալ այլ եւս բնութիւն պատկեր իգական աւգնական նմա: Եւ եղեւ երկոքեան գտան անկեալք ի պատուիրանացն: Իսկ ի մեռեալ եւ ի ցամաքեալ մարմնոյ ստեղծաւ մանուկ քարոզող նորին ստեղծչին առաջին անկեալ անկուածոյն:

Եւ արդ, ինձ ոչ է պարտ համարձակել զղուեալ լեզու իմ եւ գովութիւնս մատուցանել նմա, որ բարեբանեցաւ ի բերանոյ ամենեցուն Արարչէն, այլ այն, որ արձակեաց զպապանձումն ձայնին Ձաքարիայ, ըստ նմին համարձակեցայց զկարկամութիւն իմ գովել զայն, որ գովեցաւ ի Տեառնէ: Զի եւ նմա դարձեալ, որ Արարիչն է արարածոց համարձակապէս հրաման առաք գովութիւն մատուցանել, զի նոյն Արարիչս այս եւ ստեղծիչս, զոր յանձն առաք մեք յիշատակել: Որ եւ արձակեաց զամուրթիւն ծերացեալ, նոյն ինքն եւ նա ծագեցաւ ի ցամաքեալ յարգանդէ պտուղ, որ է սկիզբն աւետեաց աշխարհի:

Արդ, մեք ածցուք ի մէջ զաւետարանիչս, թէ զինչ պարտ են մեզ այսաւր լցեալքն Հոգով Սրբով, վասն զի առեալ ի մէջ ճառել զտնաւրէնութեան Աստուծոյ, ընդ նմին սկիզբն առնեն պատմել զծնունդ նորա, որպէս Մատթէոս ասէ. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարո-

1 Աղբիւր. ՄՄ, ձեռ. 7489, թ. 48բ-54ա
2 ձեռ. գրախտն. այսպէս և այլուր

զել յանապատին Հրէաստանի, եւ ասել. Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ» (Մտթ. Գ 2): Եւ դարձեալ, թէ. «Նա է, վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայիսամարգարէի. Ձայն բարբառոյ յանապատի» (Մտթ. Գ 3): Եւ թէ՛ «Ինքն՝ Յովհաննէս ունէր հանդերձ ստեւոյ ուղտոյ» (Մտթ. Գ 4): Ընդ նմին եւ Մարկոս ասէ. «Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի» (Մրկ. Ա 1) որպէս եւ գրեալ է ի մարգարէս. «Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո» (Մրկ. Ա 2): Եւ նոյնպէս «Ձայն, ասէ, բարբառոյ յանապատի»: Եւ եղեւ, ասէ, զի Յովհաննէս մկրտէր յանապատի եւ քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան» (Մրկ. Ա 4): Եւ Ղուկաս դարձեալ մերձաւորագոյն եւ սկզբնագոյն, թէ՛ «Եղեւ յաւուրսն Հերովդի արքայի քահանայ ոմն անուն Ձաքարիայ» (Ղուկ. Ա 5). յառաջագոյն զծնունդ նորա ատենաբանէ: Այսպէս եւ Յովհաննէս. «Եղեւ, ասէ, այր մի առաքեալ Աստուծոյ, անուն նորա¹ Յովհաննէս» (Յովհ. Ա 6): Մեծ է պատիւ առնս այսորիկ եւ յոյժ անբաւ գովութիւն սորա: Վասն զի միւս աւետարանիչն յաղագս տնտեսութեան Տեառն ճառել կամելով սկիզբն² առնէ զծնունդ նորա: Իսկ միւսն ի ծննդեան սորին արարեալ սկիզբն եւ ապա եկեալ ի տէրունականն ճառս զայս ասելով ոչ զի հաւասարք են միմեանց պատուով: Թէ այսպէս թուեցից զսոսա համեմատութեամբ ի բաց տար, այլ զի կարի յոյժ բարեկամ եւ համակամ ազգական է, ըստ մարգարէութեան Որդոյն Աստուծոյ: Եւ եթէ ոչ էր ծառայ ընտրեալ եւ հաւատարիմ եւ վերագոյն քան զնախահարս, սակայն ոչ էր առեալ գովութիւնս այսպիսի ի բերանոյ Արարչին իւրոյ: Վասն զի «չիք մեծ իբրեւ զՅովհաննէս ի ծնունդս կանանց» (Մտթ. ԺԱ 11), ասէ Տէր: Եւ վասն այսորիկ զաւետարանիչսն զայնոսիկ ածաք այսաւր ի մէջ

սկիզբն արարեալ ի ծնունդս նորա: Զի որպէս «առաջընթաց» կոչեցաւ մարդանալոյն Աստուծոյ, նոյնպէս եւ վեցամսեան ժամանակաւ յորովայնի յառաջգոյացեալ եղեւ նախ քան զյղութիւն աստուածային, եւ ծնաւ յառաջ քան զհրամայող ծննդեան իւրոյ, ըստ որում եւ մկրտութեան առնէ զսկիզբն՝ նախ ինքն կատարելով եւ կոչելով ի մկրտութիւն ապաշխարութեան եւ ի թողութիւն: Եւ սակս այսորիկ ասէ աւետարանիչն, թէ՛ «Յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ, եւ թագուցանէր զանձն ամիսս հինգ, եւ ասէր. Զինչ գործ գործեաց, ըստ իս Տէր, յաւուր յորում հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ» (Ղուկ. Ա 24-25): Եւ այսպէս ըստ կարգի յառաջ եկեալ մինչ ի մատուցանել սրբոյ Կուսին հրեշտակապետին զկենսաբեր բարբառ աւետեացն, ըստ որում ասէ. «Ահա Եղիսաբեթ ազգական քո, եւ նա յղի է ի ծերութեան իւրում, եւ այս վեցերորդ ամիս է նորա, որ ամուկն կոչեցեալ էր» (Ղուկ. Ա 36). զի ոչ տկարացի առ ի յԱստուծոյ ամենայն բան: Այլ մեք տեսցուք, թէ որպէս էր առ Ձաքարիայ ձայնն Գաբրիէլի Աւետարանին, եւ որպէս երեւեցաւ անմարմինն ըստ մարմնոյ աչաց եւ կամ ուր եւ կամ առ նմին: Դարձեալ զի՞նչ խաւսիցի վասն յղութեան Եղիսաբեթի եւ ծննդեանն Յովհաննու: «Եղեւ, ասէ, յաւուրսն Հերովդէի հրէից արքայի քահանայ ոմն անուն Ձաքարիա, եւ կին նորա ի դստերաց Ահարոնի, եւ անուն նորա Եղիսաբեթ: Եւ էին երկոքեան արդարք առաջի Աստուծոյ» (Ղուկ. Ա 5-6): Եւ ընդէ՞ր ասէ զազգատուձմն, եւ յիշատակէ եւ զարդարութիւն նոցա, այլ զի ուսցիս, յորժամ ծնանիցին զպտուղ առաքինութեան, եւ ոչ զարմասցիս, եթէ այնպիսի երեւեցաւ այրն այն, որ ի բանէն Աստուծոյ ընկալաւ զմեծութիւն գովութեան, եւ ձեռնադրաւ եւ վկայ եղեւ Տեառն իւրում, զի թէ որք ի հեթանոսաց եւ ի կուպաշտից անտի ծնան: Եւ բարիոք եղեն, որչափ եւս առաւել այնպիսի ծնաւդաց, որ այնքան առին զարդա-

1 ձեռ. նմա
2 ձեռ. սկզբն. այսպէս և այլուր

րութիւն մինչեւ յԱւետարանի Տեառն պատմին ամենեցուն:

«Եւ եղեւ, ասէ, ի քահանայանալ նորա, ըստ կարգի աւուրց հասանելոյ առաջի Աստուծոյ, ըստ աւրինի քահանայութեան եհաս նմա խուսնկ արկանել մտեալ ի տաճարն Տեառն: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն, զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն: Եւ խոռվեցաւ Ջաքարիա իբրեւ ետես, եւ անկաւ ահ ի վերայ նորա» (Ղուկ. Ա 8-12). Եւ յիրաւի խոռվէր խորհրդով, քանզի ոչ երբէք էր հրաման ումեք մտանել առ խնկարկութիւն սեղանոյ, բայց միայն ի քահանայէն: Եւ ընդէ՞ր ոչ ունէր զարհուրել, յորժամ տեսանէր զնա. Ապա յիրաւի խոռվեցաւ, եւ ասէր յանձն իւր. Զի՞նչ տեսանեմ, ասէ, զի ոչ եմուտ ոմն աւտար ի տեղիս այս, բայց յայնմանէ, որ առեալ է զիշխանութիւն քահանայութեան: Եւ ոչ գոյ այլ ուստէք մտանել ի սա, բայց միայն աստի, ուստի սովորութիւն է մտանելոյ: Եւ արդ, տեսանեմ այր առ սեղանոյս խնկոց, զի խաւսի եւ ասէ. «Մի՛ երկնչիր, Ջաքարիա» (Ղուկ. Ա 13): Եւ այդ է, որ զարհուրեցուցանէ եւ հիացուցանէ զիս: Եւ զի՞արդ անմարմնոց միայն է մտանել ընդ դրունս փակեալս, եւ աստ աւասիկ մարմին տեսանեմ: Եթէ անմարմին է՞ զի՞արդ նկատի ի տեսակ մարմնոյ, եւ ես տեսանեմ, զի երկիւղալից առնէ զիս եւ հիացուցանէ իբրեւ զմարմնաւոր անմարմին գոյով: Եւ դարձեալ տեսանեմ շրթունս մարմնաւորս, եւ զի բանա զբերան շաւափելի եւ շարժէ զլեզու նիւթաւոր եւ խաւսի, թէ՛ «Մի՛ երկնչիր»: Եթէ մարմին է՞ զի՞արդ է մտեալ աստ աներեւոյթ զաւրութեամբ, եւ թէ՛ անմարմին է՞ զի՞արդ ապա անմարմինն թանձրանայ եւ խաւսի երեւելի բարբառով. ոչ գիտեմ՞ զինչ տեսանեմ:

«Խոռվեցաւ, ասէ, Ջաքարիա, եւ անկաւ ահ ի վերայ նորա: Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Ջաքարիա»: Զի՞արդ

ոչ երկեաց, ասէ, քանզի տեսանելն իմ զքեզ եղէ իբրեւ ի հիացմանս, եւ հեր գլխոյ իմոյ թողեալ զբանական սովորութիւն իւր եւ ոչ եւս ի վայր խոնարհիցի, այլ ի վեր բարձրացեալ իբրեւ զփուշ սրեալ եւ խոզանացեալ ցուցանէ զտեսակ իւր եւ զիզանայ ի վերայ գագաթան իմոյ, եւ ասես. «Մի՛ երկնչիր»: Տեսեալ եմ, ասէ, թագաւորս եւ իշխանս եւ զաւրագլուխս: Եւ ոչ սուղ ինչ երկիւղ սասանեաց զանձն իմ, այլ, տեսանելով զքեզ, լուծան անդամք իմ:

Զի՞նչ ապա հրեշտակն պատասխանէ նմա. Բարիոք ասացի, թէ մի՛ երկնչիր, Ջաքարիա, քանզի ի կերպարանի իմում , ոչ եւս ցուցայ իբրեւ թէ հիացուցանել զքեզ, այլ այնպիսի տեսլեամբ, որպէս կարելի է տեսանել նիւթական աչաց: Իսկ թէ՛ այնպիսի տեսլեամբ եւ երեւմամբ քեզ հանդիպեցայ եւ հիացման ահի իմոյ պակեար՝ զի՞արդ ապա զիպէիր լինել իմում տեսանելն տեսանելով զիս աննիւթապէս, յորում ստեղծեալ զիս արարչագործն հրաշագործեաց: Ոչ լուար, ասէ, ձայն զայն ցանկալի զերիտասարդն՝ հասակաւ, զծերն՝ իմաստութեամբ, որ ընտրեալն կոչեցաւ ի մէջ խուժադուժ ազգացն, եթէ զի՞արդ յիմարութեամբ ըմբռնեցաւ, յորժամ ետես զպաշտաւնեայն Աստուծոյ, ո՞չ ապաքէն այսպէս ընթեռնոյք. «Ես Դանիէլ, յորժամ տեսանէի զտեսիլն եւ խնդրէի խելամուտ լինել: Եւ ահա եկաց առաջի իմ ոմն իբրեւ զտեսիլ մարդոյ, եւ լուա բարբառ ի միջոյ Ուբաղայն կոչեաց եւ ասէ. Գաբրիէլ իմացոյ զտեսիլն, եւ եկն եկաց անդ, ուր եսն էի, եւ ի գալն նորա յիմարեալ անկայ ի վերայ երեսաց իմոյ յերկիր» (Դան. Ը 15-17): Իսկ նմա այսպէս դիպեցաւ, որպէս լուարդ. Եւ ես ոչ այնպէս երեւեցա քեզ, որպէս նմա, եւ ոչ անկար ի վերայ երեսաց քոց, այլ կաս կանգուն եւ բարբառիս: Վասն այսորիկ յիրաւի ասացի, թէ՛ «Մի՛ երկնչիր». զի ոչ առ ի հիացուցանել զքեզ յայտնեցայ, այլ պատմել քեզ պատգամս Աստուծոյ: Արդ, «մի՛ երկնչիր, զի լսելի ե-

ղեն աղաւթք քո, եւ կին քո Եղիսաբեթ ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յովհաննէս»: Զայս իբրեւ լուաւ Ջաքարիա, դարձեալ խոռվեցաւ յանձն իւր, եւ ասէ. Ահա մոլորիմ ի բանէդ քումմէ. ասես, թէ՛ «Լսելի եղեն աղաւթք քո», եւ դարձեալ թէ՛ «Կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի». մի՞թէ յաղազս ծննդեան որդոյ աղաւթս մատուցանեմ, զի՞արդ իսկ կարէի համարձակել եւ խնդրել յանհիւթ վիմէ ծնունդ արմատոյ եւ ծաղիկ ազգի. ոչ գիտեմ՞ զինչ խաւսիսդ, մի՞թէ մոլորեալ իցես ի խնդրուածոց իմոց: Ես քաւութիւն խնդրեմ ժողովորդեանն, եւ դու ասես, թէ՛ «Կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի»: Զի յորժամ ասացեր, թէ՛ «Լսելի եղեն աղաւթք քո», խնդացի յոյժ: Եւ յորժամ զկնի այդմ բանի յղութիւն եւ ծնունդ բարբառեցար, տխրացայ եւ մոլորեցայ. զի ոչ այդպէս է ժտել, որպէս ասես, թէ՛ «Լսելի եղեն աղաւթք քո». քանզի ժողովորդքն կան արտաքոյ, եւ մնան, զի յելանելն իմում լսիցեն բան ինչ մխիթարութեան: Եւ արդ, յեւլանելն իմում, յորժամ հարցանիցեն ցիս, զայդ պատմեցից նոցա, եթէ Եղիսաբեթ ամուսինն իմ ծնցի որդի, ո՞չ ապաքէն քարկոծ արասցեն զիս: Եւ յիրաւի ո՞չ ապաքէն ասիցեն. Մի՞թէ վասն այսորիկ կամք եւ մնամք աստէն, զի զայդ լուիցեմք ի քէն, եթէ՛ «Կին քո ծնցի քեզ որդի», եւ յորժամ որդի ոչ գոյր քեզ՞ զի՞նչ պակասեաց ազգի մերում, կամ թէ՛ ծնցի քեզ որդի՞ զի՞նչ շահ է մեզ, կամ ի դէպ հայցուածոց մերոց: Զի՞նչ ապա, տես, ասէ նմա հրեշտակապետն. Ով Ջաքարիա, քեզ այդպէս թուեացի, թէ՛ մոլորեալ եմ ի խնդրուածոց քոց իբրեւ թէ՛ այլ ինչ է, զոր խնդրեսդ, եւ այլ ինչ տամ տամ քեզ պատասխանի, եթէ խելամուտ լինիցիս խորոց բանից խորհրդոց իմոց, ըստ քում հայցուածոցդ եղի պատմութիւն բանից աւետեացս, զոր մատուցանեմ քեզ, եթէ՛ «Լսելի եղեն աղաւթք քո»: Դու խնդրես քաւութիւն ժողովորդեանն, եւ զնոյն այդմ բանից շնորհեմ քեզ պատաս-

խանի: Ասեմ, թէ՛ «Ծնցի քեզ մանուկ, եւ կոչեսցի անուն նորա Յովհաննէս», եւ բազումք ի ծննդեան նորա խնդացեն: Գիտեմ, ասէ՛ զինչ խաւսիցիմ, եւ յաւելում ասել վասն մանկանն, զի «մեծ կոչեսցի առաջի Տեառն»: Եւ առաքեցից զքեզ առ Մաղաքիաս՝ ուսուցանել քեզ վասն մանկանդ, զի ասէ. «Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեցէ զճանապարհս քո առաջի քո» (Մրկ. Ա 2). զնա ծնցի քեզ որդի կին քո Եղիսաբեթ: «Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն» (Ես. Խ 3), եւ մանուկն եղիցի յառաջընթաց նմա, որ գալոցն է, եւ ազատեցէ զժողովուրդ իւր, եւ ապրեցուցէ փրկել ի յանցանացն եւ յանիծիցն: Արդ, զի՞նչ ունիցիս այժմ ասել. խաւսիմ ըստ քո խնդրոյդ. եթէ ոչ այդպէս է խորհուրդն տերունական, եւ զայդ եկի պատմել քեզ, ըստ քո մաղթանացդ, եւ ասել, եթէ՛ մանուկն Հոգով Սրբով լցցի անդստին յորովայնի մաւր իւրոյ, եւ զբազումս յորդոցն իսրայէլի դարձուցէ ի Տէր Աստուած իւրեանց: Զայդ ամենայն առի հրաման աւետարանել քեզ: Եւ արդ, յիրաւի ասացի, եթէ՛ «Լսելի եղեն աղաւթք քո». զի զայն, որ գալոցն է զկնի մանկան քում ծնիցելոյ ի քէն, նա է, որ փրկելոց է զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց եւ յանիծից նախամաւրն: Վասն այսորիկ ասացի, թէ՛ «Բազումք ի ծննդեանն նորա խնդացեն» (Ղուկ. Ա 14), զի զոր զկնի նորա գայ, զորմէ քարոզէ, թէ՛ «Պատրաստ արարէք զճանապարհս նորա», զի նա է աւարող դժոխոցն, եւ հանցէ անտի զբազմութիւնսն զաւրութեամբ իւրով, որպէս եւ գրեալ է, թէ՛ «Հանցէ զկապեալս քաջութեամբ իւրով» (Սղմ. Կէ 7): Եւ մանուկն եկեցէ առաջի նորա «Հոգով զաւրութեամբ Եղիայի՛ դարձուցանել զմիտս հարց յորդիս, եւ զանհաւանս՝ յիմաստութիւն արդարոց՝ պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ» (Ղուկ. Ա 17): Զայդ ամենայն եկի աւետարանել

քեզ, եւ յիրաւի ի քեզ բարբառեցա՛ լսելի լինել աղաւթից քոց:

Ձայս ամենայն լուեալ Ձաքարիայ տակաւին ի տարակուսանս լեալ ասելով ի միտս իւր. Արդարեւ այդպէս է բանդ այդ, եւ եթէ հնար է լինել մանուկ ինձ, այլ զի՞ արդ լինիցի այդ. զի ծերացեալ ալիք զարգանայ, կամ զի՞ արդ որովայն, նուազեալ ի հիւթոց, ի խոնաւութիւն փոխի, զոր ոչ վայելեաց մանկութեան բնութիւն, այժմ զի՞ արդ վայելեալ ի ծերութեան:

Ձայս ամենայն խորհէր ի միտս իւր Ձաքարիա, եւ ասէր ցհրեշտակն. Ո՞րով զիտիցես զայդ, զի ես ծերացեալ եմ, եւ կին իմ անցեալ է զաւուրբք իւրովք: Զի՞նչ ապա ասէ հրեշտակապետն. Զհանդերձեալսն մարգարէացար, եւ զոր տեսանես եւ լսես այսմ ո՞չ հաւատաս. մի՞թէ անհնարին է առաջի Տեառն ամենայն բան: Ո՞չ լուար, եթէ զիարդ բաժանեաց ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին, կամ թէ զիարդ արար զերկիր ի ներքոյ ջուրց, եւ «էր աներեւոյթ եւ անպատրաստ» (Ծնդ. Ա 2): Ո՞չ տեսանես՝ զիարդ ի չգոյէ գոյացոյց զամենայն: Ո՞չ հայիս՝ զիարդ առանց սեան եւ հաստատելոյ հաստատեաց եւ ձգեաց զկամարս երկնից: Կամ ո՞չ իմասցիս, թէ որպէս ջուր բազում ոչ մաշէ եւ տանի զաւազս սակաւս: «Եւ այս ծով մեծ եւ անդորր»¹ (Սղմ. ՃԳ 25), եւ գետք յորդագնացք եւ բազմակոհակք հաստատեալ կան ի վերայ աւազոյ եւ ոչ մաշին եւ ոչ հալիցին: Զի՞ արդ ոչ հայեցիս ի լուսատուսդ տուրնջեան եւ զիչերոյ, զի ոչ իցեն կառուցեալ յիմիք եւ հոլովին արագութեան ընթացիւք առանց ձեռին, եւ տեսանես զնոսա յարեւմուտս մտեալ եւ անդրէն յարեւելս դարձեալ: Զի՞ արդ ոչ նկատես ի կաճառս աստեղաց, թէ որպէս յաւզս հաստատեալ կան, եւ իբրեւ հաստատունք զարդարմամբ պայծառանան յաչս մարդկան: Եւ զմեծս զայս ոչ

ծանեար զառաջին ստեղծածէն, թէ զիարդ ի հողոյ յարմարեցաւ ոսկերք շաղաշարեալք, ջիւք քաջապնդութեան, մարմին եւ մորթ, եւ շունչ կենդանութեան, եւ ոգի բանական եւ իմանալի, եւ կերպարան մեծ եւ հրաշալի մեծութեան Աստուծոյ: Ո՞չ պշուցեալ լինիս ընդ հող երկրի՞ զի՞ արդ եբեր առանց սերման բանջար դալարոյ եւ զանազան ծառս պտղաբերս եւ ազգի ազգիս: Եւ արդ, թողից զամենայն եւ ասացից զախտակիցսն քո՝ զԱբրահամ ասեմ եւ զՍառա, որ անցեալ էին զաւուրբք իւրեանց, եւ պակասեալ ի յուսոյ ծննդակաւութեան, եւ ծնան զգերահարաշն կերպարանաւք եւ տեսակաւք առաքինութեան: Եւ արդ, տես, թէ տկարացաւ յայսոսիկ բան, եւ դու ի բանից իմոց ո՞չ հաւատաս: Մի՞թէ ոչ գիտես՝ ով կամ ուստի առաքեցա՞ նորա եմ պաշտաւնեա եւ զաւրապետ, որ արարողն է եւ հրաշագործողն է այսմ ամենայնի, զոր պատմեցի քեզ: Ես եմ Գաբրիէլ, ասէ, որ կամ առաջի Տեառն, եւ առաքեցա խաւսել ընդ քեզ, եւ աւետարանել քեզ զայդ:

Գիտացի, ասէ Ձաքարիա, զի հրեշտակ Տեառն զաւրութեան էիր, եւ վասն այնորիկ հնար եղեւ մտանել քեզ աստ: Սակայն տարակարծ լինիմ՝ տեսանելով զանմարմինդ իբրեւ թանձրութիւն հողանիւթ խաւսելով ընդ իս, եւ զոր խաւսեցար զայդ, զոր լուաւ ունկն իմ, զի ի վեր է անցեալ քան զբնութիւնս, յորմէ պահանջի պտուղ, եւ յորժամ ժողովուրդն հարցանէին ոչ գիտէի՞ զի՞նչ տաց պատասխանի:

Եւ ասէ ցնա հրեշտակն. Գիտեմ, զի ոչ հաւատացեր բանից իմոց, եւ ահա եղիցիս համր, եւ մի՛ կարասցես խաւսել, եւ եղիցի քեզ պատճառ չտալ պատասխանի ժողովրդեանն, եւ իմասցին, թէ տեսիլ ինչ տեսեր, եւ ոչ ինչ մեղադրանս պատուհասի անցեմ ի վերայ քո, այլ ոչ մնասցիս ի սպառ, այլ մինչեւ անցուցանելով անցուցես զպատճառ ժողովրդեանն, եւ յաւուրսն, որում

1 ձեռ. անդորդ.

այդ լինիցի փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց, որք լցցին ի ժամանակի իւրեանց: Եւ ասէ, եւ առաւելապէս եւ գեր ի վերոյ քան զբնութիւն մարդկան եւ քան զաւետիսդ զայդ պատրաստեալ եմ լինել սպասաւոր Կուսի, որ է ազգական կնոջ քո: Եւ առ ի հաւատալ բանից իմոց զսաղմառութիւն Եղսաբեթի աւրինակեցից նմա: Զի որպէս ցամաքեալ որովայնն առցէ սաղմառութիւն, այսպէս եւ կուսական արգանդն յղասցի ի Հոգւոյն Սրբոյ, եւ զծերացեալ ծնունդն ամլութեան համեմատ աստուածային կուսական ծննդեանն:

Եւ զայս ամենայն խաւսելով՝ հրեշտակն գնաց անտի, եւ ժողովուրդն ակն ունէր Ձաքարիա, եւ զարմանային ընդ յամելն նորա ի տաճարին, զի եկաց իբրեւ ժամք երեք խաւսելով ընդ նմա հրեշտակին: Եւ իբրեւ ել նա ի տաճարէն, ոչ կարէր խաւսիլ ընդ ժողովրդեանն, զի զի՞նչ եւս ունէր ասել. մի՞թէ ունէր առ նոսա ասել, եթէ աւետարանեմ ձեզ զյղութիւն Եղսաբեթի: Այո, ասէ, կարի յոյժ բարբառեա, ընդէր որպէս եւ յառաջագոյն ասացի: Կայք ասէ եւ մնայք, զի ելանելս իմում պատմեցից ձեզ զաւետիս քաւութեան յանցանաց ձերոց: Եւ արդ, ոչ եթէ փառաւորութեան միայն մատուցանեմ ձեզ զաւետեացս բարբառ, այլ եւ այնմ իբի, զոր «ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ոչ ել սիրտ մարդոյ» (Ա Կորնթ. Բ 9) եւ պատրաստող ճանապարհի պարգեւողի այդմ բարութեան ի ծերացեալ ծնունդ յորովայնին Եղսաբեթի: Աւաղիկ ցուցանեմ ձեզ ի ճահ եւ ի դէպ էր ասել զայս, թէ խաւսեցեալ էր, այլ ոչ կարաց խաւսել ընդ նոսա: «Եւ իմացան, եթէ տեսիլ ետես ի տաճարին» (Ղուկ. Ա 22):

«Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տուն իւր» (Ղուկ. Ա 23): Զոր ասէ «աւուրք պաշտամանն», զայնոսիկ ասէ, զի յորժամ կամէր մտանել ի տաճարն, նախ երեք աւուրբք յառաջ

սրբէր զանձն իւր յանկողնոյ իւրմէ. «Եւ լցան աւուրք պաշտաման նորա, եւ գնաց ի տուն իւր»: Այլ Ձաքարիայի անկողին ոչ գոյր, այլ պարտ էր կատարել զաւրինացն:

«Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղսաբեթ կին նորա» (Ղուկ. Ա 24). Ո՞ զարմանալոյ սքանչելեացս. ընդէ՞ր ոչ յաւուրս մանկութեան յղացաւ Եղսաբեթ, զոր հանդերձեալ էր ծնանիլ կամ վասն է՞ր ոչ հաւասարեցաւ բնութեան կանանց, զոր պահանջէ բնութիւն մանկութեան. ընդէ՞ր զի աւրինակ լինելոց էր աստուածային ծննդեանն: Եւ մեծ լինելոց էր ծնունդն այն որպէս եղեւ իսկ: Ո՞ լուաւ ի մարդկանէ գովութիւն այնպիսի յերկնից՝ ուստի կամ յորմէ. ոչ հրեշտակէ, այլ Արարչէն ամենեցուն: «Զիք, ասէ, ի ծնունդս կանանց մեծ իբրեւ գիտականէս» (Մտթ. ԺԱ 11, Ղուկ. է 28): Եթէ գովեն զառաջինն ի մարգարէից Մովսէս, որ եւ մեծ անուանեցաւ, եւ աստուածատես եղեւ, այլ ոչ լուաւ, եւ աստուածատես եղեւ, այլ ոչ լուաւ ասպիսի բարբառ: Ծնաւ աւետեաւք եւ Սամուէլ, այլ ոչ երբէք այդպիսի գովութիւն յԱստուծոյ բանէն ընկալեալ եղեւ: Այլ ասես՝ աւետեաւք ծնան ոմանք, վկայեմ եւ ես, այլ ոչ որպէս եւ նա: Ծնաւ աւետեաւք եւ Սամփոսն, այլ մարգարէութեան ոչ ընկալաւ շնորհ, այլ ոչ մարգարէացաւ յորովայնի:

Երթ առ աւետարանիչն, եւ նա ուսուցէ քեզ, եւ զի՞նչ ասիցէ. «Յաւուրսն այնոսիկ, ասէ, յարուցեալ Մարիամ գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուզա, եւ եմուտ ի տուն Ձաքարիայ, եւ ետ ողջուցն Եղսաբեթի: Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա» (Ղուկ. Ա 39-41): Ոչ եթէ խաղաց միայն, այլ եւ խայտեաց: Եւ որպէս խայտեաց, մարգարէացաւ յորովայնի՝ տեսանելով զԱրարիչն իւր յորովայնի Կուսին, եւ խոնարհեցուցեալ զգլուխ իւր, երկիր պագեաց նմա: Մարգարէացաւ յորովայնին, եւ զմայրն իւր ընդ

ինքեան մարգարէացոյց: Վասն այնորիկ «մեծ» կոչեցաւ «ի ծնունդն», եւ բարձր առեանեցաւ անունն նորա յորովայնի մաւր իւրում:

«Եւ Եղիսաբեթի, ասէ, լցան աւուրք ծնանելոյ, եւ ծնաւ որդի» (Ղուկ. Ա 57): Եւ եղեւ աւետեալք սաղմնառութիւն Եղիսաբեթի: Լուր արդեալք, եթէ զինչ լինիցի մարգարէութիւն ի ծնունդ նորա, կամ թէ որպէս է զաւրութիւն ծնելոյն, զի՞արդ արձակէ զպապանձեալ լեզուն. եւ ոչ արձակեցաւ միայն, այլ առաւելապէս առեալ շնորհք մարգարէութեան եւ մարգարէացաւ վասն մանկանն: Եւ զի՞նչ խաւսիցի, լուր արդեալք:

«Լցաւ, ասէ, ժամանակ թլփատութեան մանկանն, խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. Յովհաննէս է անուն մանկանդ: Ջարմացան ամենեքեան, եւ բացաւ բերան նորա վաղվաղակի եւ լեզուն նորա, եւ լցաւ Հոգևոյ Սրբոյ, մարգարէացաւ եւ ասէ. Աւրհնեալ ես Իսրայէլ, զի այց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ» (Ղուկ. Ա 59-68): Զի՞նչ մարգարէանաս, ո՞վ Ջաքարիա, ամլածնարժ մանուկ եւ ուրախացար յոյժ, այլ մեզ զի՞նչ փրկութիւն իցէ ծնունդ քո ժողովրդեանն Աստուծոյ: Ասէ. Ոչ մոլորեցայ. այդպէս է որպէս ասացերդ, խնդրէաք փրկութիւն, եւ «այց ել մեզ եւ արար»: Զի՞նչ իցէ փրկութիւն մանկան քո ժողովրդեանս այսմիկ որպէս ասացի, եւ այսպէս իցէ, եւ մանուկդ իմ լինիցի յառաջընթաց Փրկողին ժողովրդեանդ: Եւ յորժամ տեսաք զսա ծնեալ առ ի մէնջ ծանեաք, զի զկնի սորա պատրաստեցի ճանապարհ այնմիկ, որ գալոց իցէ, եւ եղիցի ազատիչ ժողովրդեան իւրում, եւ արասցէ փրկութիւն նոցա. զի՞արդ կամ որպէ՞ս: «Զի յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ» (Ղուկ. Ա 69): Ո՞ր «եղջիւր փրկութեան»:

Սակաւ ինչ ներեա, եւ ես ցուցից քեզ: «Եղջիւր բարձր» (Հմմտ. Սղմ. ՃնԸ 14) ի Բեթղեհէմէ, որ հարկանելով հարցէ զամենայն թշնամիս մեր, եւ «տա մեզ զառ ի նոցանէ փրկութիւն եւ ազատէ ի ձեռաց ատելեաց մերոց՝ առնել ողորմութիւն հարցն մերոց» (Ղուկ. Ա 71-72): Ահա հարցն առնել ողորմութիւն ասէ զծնունդ մանկանն: Արդ, ժողովրդեանն, որ ասէ փրկութիւն հարցն: Զի՞նչ իցէ՝ Ոչ եմ մոլորեալ, եւ ոչ այդ բան է, որ ի ձեռն նախահաւրն իջին ի դժոխս նախահարքն, եւ ահա արեգակն արդարութեան մատուցանէ նոցա բարբառ աւետեաց եւ զփրկութիւն մանուկս այս, թէ՛ զկնի իմ գալոց է աւերողն դժոխոց եւ բացող դրախտին փափկութեան փակելոյն առ ի մէնջ: Եւ արդ, ոչ եթէ ողորմութիւն միայն, այլ եւ ազատել ի դժնդակ խաւարէ անտի, եւ մոծանել ի լոյսն անմատոց՝ փրկելով յաղջամղջին միգէ եւ վայելել ի մշտնջենաւորն երկնից արքայութիւն, քանզի ըստ պիտոյից մարմնական բնութեանս դաշինս եղաւ ի Սաղմոսի անդ ամս եաւթանասուն կամ թէ առաւել եւս՝ ութսուն (տե՛ս Սղմ. 2թ 10): Այլ զկենացն այն ոչ գոյ չափ եւ թիւ համարոյ որպէս անձրեւաց կամ ձեան: Մի՞թէ ոչ իցէ այդպէս որպէս մարգարէացարդ: Այո, ասէ, կարի յոյժ եւ արդար մարգարէացա եւ ասացի առնել զողորմութիւն հարցն: Գովեմ մարգարէանալով զմանուկս, գովեմ իսկ եւ ասեմ, եթէ՛ «Դու մանուկ մարգարէ մեծ Բարձրելոյն կոչեսջիր» (Ղուկ. Ա 76): Եւ արդ, մի՞թէ այլ մարգարէք ոչ էին կոչեցեալ «մարգարէ Բարձրելոյն»: Գիտեմ, ասէ, զի կոչեցան, եւ ես ի թիւս նոցա կոչիմ: Այլ այնպէս ոչ կոչեցաք իբրեւ զնա: Մարգարէացաք եւ մեք վասն գալստեան նորա, այլ սա վայելեաց տեսութեամբ նորա՝ «երթալ առաջի երեսաց նորա՝ պատրաստել զճանապարհս նորա, եւ տայ զիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ»: Զի՞նչ ի-

1 Զիք ՆԲՀ. բայց ամլածին, ամլածնութիւն

2 ձեռ. կոչեացի

ցէ զիտութիւն ճանաչել, եթէ նա է Որդի Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ, զոր ցուցանելոց է մանուկս այս, եթէ նա է, եւ «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա 29): Զնա ծաներուք, զնա խոստովանեցուք, նմա երկիր պագցուք վասն զթութեան եւ ողորմութեան նորա:

Սա է թողութիւն մեղաց:

Սա է «արեգակն ի բարձանց, որ ծագեցաւ այնոցիկ, որք նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու» (Ղուկ. Ա 78-79):

Սա ուղղեցէ զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան:

Սա է ազատիչ ամենայն արարածոց, որք հաւատան ի նա:

Իսկ ես ասացի վասն մանկանն, թէ՛ «Մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր», այլ ինքն հրաշագործող մանկանս ասէ, թէ՛ «Մեծ ի ծնունդս կանանց չիք իբրեւ զՅովհաննէս» (Մտթ. ԺԱ 11, Ղուկ. է 28): Եւ եթէ, զոր Բանն Աստուծոյ գովեաց՝ ո՞ր համարձակեցի առաւել գովութիւնս մատուցանել: Սակայն առաքիներութիւն սոր ոչ տա լուել լեզուի իմում:

Եւ արդ, զի՞նչ ասացից կամ որպէ՞ս գովեցից զընտրեալն յորովայնէ, զաւրհնեալն Յովհաննէս. զմարգարէն նախ քան ի խանձարուրս, զմայրական բնութեան նորաձեւիչն, այսինքն՝ զարձակողն ամլութեան, զհասկն կորդացեալ ակաւսին, զանհիւթ ապառաժին զծաղիկն, զվիմէ արմատացեալ բոյսն, զբազմաշուք ծառն, զյուսահատելոցն ի զաւակէ զմեծ եւ զճշմարիտ որդին, զիմաստունն յարգանդէ, զսպասաւորն ի հրեշտակաց, զառ ի յորովայնէ երկրպագողն, զսկիզբն աւետեաց աշխարհի, զյառաջընթացն Փրկչին, զպատրաստեալ ճրագն առաջի Աւծելոյն, զարուսեակն Արեգականն, զՀաւրէ Աստուծոյ առաքեալն, զՈրդոյն Աստուծոյ Մկրտիչն, զտիեզերաց բարութեան սպասաւորն, զճայն Բանին Աստուծոյ, զքարոզողն զա-

ւետաւորն Ադամայ, զփողն փրկութեան, «զճայն բարբառոյ յանապատին», զբարբառ աւետեացն ի դժոխս կապելոցն, զբարեկամն Փեսային, զմշակն արդիւնաժողով, զշուրջ զ[Յ]որդանանաւ պահողն քաջապինդ, զգարդ յաւրինացն, զմիջնորդ առաջնոյն առ նորս, զանապատական տատրակն, զգարնանային զուարճաճայն¹ ծիծեռն, զարբութեան առաջնորդն, զճրագն ի վերայ աշտանակի, զյորդոզ ճանապարհի արքայութեան, զմեղաւորաց բարի խորհրդակիցն, զանաւրինաց յանդիմանիչն, զերեւելի այրն, զհուշակեալ հրեշտակն, զաստուածայայտութեան հրամանաբերն, զանապատի մանանայն, զհամարձակեալ աջն, զչար խորհրդոցն տապարն, զՀերովդէի յանդիմանողն, զհին աւրինացն փարատողն, զառաքելոց սկսանողն, զխոստովանողն ճշմարիտ, զվկայն արդարութեան, զմարտիրոսն մեծազարդ, զառաքեալն շնորհալի, զԿարապետն եւ զՄկրտիչն եւ զձեռնադրողն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փա՛ռք ընդ Հաւր հանդերձ Հոգևոյն Սրբոյ յաւրտեանս. ամէն:

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊՐՈԿԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՍԱՊԵՏԻՆ ԿՈՆՍԱԿՏԱՆՈՒՊՈԼՍԻ ՅԱՍՏՈՒԱՏԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ²

ա. Քրիստոս աշխարհի յայտնեցաւ³ եւ զանգարդ աշխարհս զարդարեալ լուսա-

1 ձեռ. գուարճաճան:
2 Աղբիւրներ. Ա = տպ. «Բազմավէպ», 1934, էջ 5-8 (հրատ. Հ. Գ. Սարգիսեան, ըստ Վենետիկ, ձեռ. 710, թ. 659-663. «Գրիգոր կթղ. Անասարգեցոյն ճառընտրէն» «գրեալ վասն Աւշմի թագաւորին») Բ = ՄՄ, ձեռ. 996, թ. 125բ-127բ Գ = ՄՄ, ձեռ. 2190, թ. 270ա-274ա
Խորագիր. Բ Երանելոյն Յովհաննոս Ոսկեբերանի Յայտնութիւն Տեառն/ Գ Երանելոյն Յովհաննոս Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յայտնութեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ
3 Բ յայտ յայտնեցաւ

ւորեաց¹, գաշխարհի զմեղս երարձ, զթշնամիս աշխարհիս արտաքս ընկեց, սրբեաց զաղբերս ջուրց եւ լուսաւորեաց զորդիս² մարդկան: Զարմանք պատեցին³ մեծամեծ⁴ զարմանալեաւք, վասն զի⁵ այսաւր երկիր եւ ծով մասնաւորեալ բաժանեցին⁶ զուրախութիւնս⁷ Փրկչին, եւ աշխարհս ամենայն խնդութեամբ լցաւ⁸, քանզի յառաջահասն տաւն⁹ այսր աւուր¹⁰ տաւն մեծագոյն ցուցանէ զաճուճն սքանչելեացս, քանզի յառաջանցեալ¹¹ ծնունդ Փրկչին երկիր ուրախացեալ ի մսուր¹² բոլորիցս Տէրն բառնալով¹³: Իսկ այսր աւուրս¹⁴ տաւնիս Աստուածայտնութեան ծով յոյժ բերկրեալ զուարճանայ որպէս ի¹⁵ ձեռն Յորդանանու զարբութեան աւրհնութիւնսն¹⁶ ընդունելով:

Յառաջ անցեալ¹⁷ տաւնին անկատար տղայ ցուցանիւր¹⁸ վկայելով մերում անկատարութեանս¹⁹: Իսկ ի յայսմ²⁰ աւուր տաւնիս²¹ կատարեալ տեսանի ի կատարելոյ՝ զկատարեալն նշանակելով:

Արդ²², զծնունդն գուշակեաց²³, որ յարեւելս երեւեալ²⁴ աստղն, իսկ մկրտելումն²⁵ վկայէ ի վերուստ²⁶ ծնաւդն Հայր: Անդ մոգք յարեւելից հետեւակագնացեալ²⁷, որ գունակ²⁸ թագաւորի եղեն ընծայաբերք²⁹, իսկ աստ Հրեշտակք յերկնից³⁰ եկեալ որպէս Աստուծոյ վայելչական սպասաւորութիւնս³¹ առմատուցին: Անդ կապեալ լինէր ի խանձարրաւցն կապանաւք³², իսկ աստ լուծանէ զմեղացն տուռնս: Անդ թագաւորն զծիրանիս մարմնոյն զգեցաւ³³, իսկ աստ աղբիւր զգետ³⁴ զգեցաւ:

Եւ զի դարձեալ զարմանամ, թէ զՍաչն ընդ իւր բերէ, նաեւ զվէրսն ցուցանէ. «Յայնժամ տեսցեն, ասէ, զոր խոցեցինն» (Յովհ. ԺԹ 37): Որպէս առ Թովմայիւն արար եւ կամէր զթերահաւատութիւն աշակերտին յանդիմանել, ցուցանէր նմա յանդիման տեղիս բեւեռացն եւ զվէրսն, եւ ասէր. «Արկ զձեռն քո եւ տես, զի ոգին մարմին ոչ ունի եւ ոսկր, որպէս զիսս տեսանէք, զի ունիմ» (Ղուկ. ԻԴ 39): Նոյնպէս եւ յայնժամ ցուցանէ նոցա զՍաչն եւ զվէրսն, թէ նա է այն, որ ի խաչն ելեալ է: Եւ ոչ եթէ խաչիւն միայն, այլ եւ ի նմին ճառէ խաչին զանչափ մարդասիրութիւն նորա պարտ է գիտել, յորժամ ընդ խաչին բեւեռեալն էր, եւ այսն առնէին, եւ ընդ երեսս

1 ձեռ. երկիրդական

թքանէին: Ասէր. «Հայր, թող սոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ 34): Խաչելեալն ի վերայ խաչահանուացն աղաւթս առնէր, իսկ նոքա հակառակ նորա ասէին. «Եթէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ» (Մտթ. Իէ 40): Նա վասն այնորիկ ոչ իջանէր ի խաչէն, զի Որդի Աստուծոյ էր, եւ վասն այնորիկ եկն, զի խաչեսցի վասն մեր:

«էջ ի խաչէ» այտի, զի հաւատացուք քեզ. այսպէս են եւ պատճառ թերահաւատութեան: Այլ քան զիջանելն ի խաչէ անտի յոյժ առաւել էր յառնելն ի գերեզմանէն, որոյ վէմն առ դուրսն կայր: Քան զիջանելն ի խաչէն առաւել մեծ էր զմեռեալն պատեալ զՂազար չորեքաւրեայ կապանաւքն հանեալ ի գերեզմանէն: Նոքա ասէին. «Թէ Որդի ես Աստուծոյ, փրկեա զքեզ» (Հմմտ. Մտթ. Իէ 40): Իսկ նա զամենայն ինչ առնէր, զի զթշնամիսն իւր ապրեցուցէ:

«Թող սոցա զմեղս, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն»: Ապա զի՞ եթող նոցա զմեղս. եթող, եթէ կամեցեալ էին ապաշխարել: Եթէ ոչ թողեալ էր նոցա զմեղս եւ ոչ անդրէն անդ երեք հազարք եւ հինգ հազարք եւ բազում բիւրք հաւատացեալ էին ի հրէից : Եթէ ոչ թողեալ էր նոցա զմեղս՝ ոչ կարէր Պաւղոս առաքեալ լինել: Լուր առաքելոցն՝ զինչ ասեն ցՊաւղոս. «Տեսանե՞ս, ասեն, եղբայր, որչափ բիւրք են հրէից հաւատացելոց» (Գործք ԻԱ 20):

Նմանեցուք այսուհետեւ Տեսառն մերում. եւ ի վերա թշնամեացն աղաւթս արասցուք, զի խոստացեալ բարեացն հասցուք ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում ամենայն փառք յաւիտեանս:

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊՐՈԿՂԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՅԻՆ ԵՒ ՆՐԱ ՃԱՌԵՐԻ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆԸ

Մերձակա տաւնիս խորհուրդ արդեամբք գերազանցեալ քան զբան² ընդդէմ միմեանց զգործ եւ զբան տեսանեմք, քանզի բան կամելով մերձ կացուցանել զմեծութիւն գործոյն: Իսկ գործք առաւելեալ քան զգաւրութիւն բանի շտապումն բանի հասուցանէ³:

Սակայն վեհագոյն յաղթութիւն զայսպիսի պատմութիւնս⁴ վարկանիմ, քանզի ոչ եթէ ի մոլորութենէ է յաղթութիւնս⁵, այլ ի գովաբանութեանց⁶ երանելւոյն⁷ Ղուկասու աւետարանչի, որ եւ զամենայն արարածական բնութիւնս զերկնաւորսն եւ զերկրաւորս սքանչելի աստուածաբանական պատմութեամբն զարմացոյց:

Զի՞նչ մեծագոյն քան զաւետարանիչս⁸ կամ զի՞նչ հաւասար այնմ⁹ շնորհաց, որոց խորհուրդն ի վեր քան զամենայն արարածս անցանէ, որոյ լեզուն զհայրական ծնունդն պատմեաց անհասանելի գոյ, եւ նախ քան զյաւիտեանս, որ¹⁰ որոտաց զանճառելի խորհուրդն:

Մարդ էր իբրեւ զմեզ ի կաւոյ ստեղծեալ, եւ մահկանացու գոլով մարմնով հաւատոցն աչաւք բարձրացեալ քան զան-

մարմնական զաւրութիւնսն ետես որպէս հասանելի է¹¹ զանսկիզբն Հայրն¹² գիտաց եւ զանսկիզբն Բանն՝ ծնեալ յանսկզբնականն¹³ Հաւրէ առանց չարչարանաց, առանց հատուածոյ¹⁴, առանց բաժանման, առանց որքանութեան, առանց որպիսութեան զուգահաւասար ինքեան¹⁵, անյեղապէս ծնեալ Աստուած յԱստուծոյ: Ետես ի վերայ Աթոռոց քերովբէից զհամագոյ Երրորդութիւն երկրպագեալ ի շրջակացեալ սերովբէիցն եւ յայլոց անմարմնական զաւրութեանցն զանճաւորութիւն բաժանեալ եւ բնութեամբ միաւորեալ, այլ եւ զերրեակ կերպարանս անճաւորութեանցն եւ կոչմանցն ի մին ոչ խառնակեալ: Եւ քան զսերովբէսն համարձակագոյն գտաւ աւետարանիչս, քանզի նոքա ի փայլատակմանէ Աստուածութեան սարսափեալ թեւասքողեալ ծածկէին զերեսսս իւրեանց, իսկ սա շնորհաւք Հոգւոյն Սրբոյ աւլցեալ զհայրական ծնունդն աստուածաբանեաց: Դարձեալ զփրկական իջումն սոսկալի տնաւրէնութեամբ խոնարհեալ յայրին, եւ զոր հաւատոցն աչաւք հոգիացեալ յայտնեաց զխորհուրդ անքննելի անեղին Աստուծոյ ծննդեանն, այսպէս եւ մարմնական աչաւք ականատես եղեալ պատմեաց զփրկական տնաւրէնութիւն:

Ետես մայր անհարսնացեալ, ետես ծնունդ, որ սկիզբն ոչ ունէր, եւ ընդ մեզ ելով Աստուած մարդացեալ:

Ետես տղայ ի գիրկս գգուեալ, եւ նոյն արարիչ յաւիտենից:

Ետես Աստուած թափեալ զինքն ունայնացեալ ի ծառայի կերպարանս:

1 Աղբիւր.
Ա = Վեներիկ, ձեռ. 210, թ. 76բ-78բ
Բ = ՄՄ, ձեռ. 993, թ. 726 բ
Խորագիր. Բ Երանելւոյն Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի Աերբողեան ի աւետարանիչն Ղուկաս
2 Բ > գրամ
3 Բ հասուցամի
4 Բ յաղթութիւնս] պատմութիւնս
5 Բ յաղթութիւն
6 Բ գովաբան
7 Բ յերանելւոյն
8 Ա զաւետարանիչ
9 Ա այսմ
10 Բ > որ

11 Բ > է
12 Ա Հայր
13 Բ յանսկզբնական
14 Ա հատուածի
15 Բ շար չիք

• Ետես մտուր բազմական ահաւոր խորհրդոյ, ետես ի խանձարուրս պատեալ զփրկիչն տիեզերաց:

Ետես փախստական ելեալ յԵգիպտոս զայն, որ ունի զերկիր քլաւ (Հմմտ. Ես. Խ 12):

Ետես Խաչ սանդուխք յերկրէս յերկինս Հաստատեալ

Ետես գերեզման ընդդէմ մահու զէն եղեալ:

Ետես փչումն ճոխացեալ Հոգւովն Սրբով:

Ձայս Աստուած սքանչելի խորհուրդս թաքուցեալ ի սերովբէիցն երանելի Աւետարանին աստուածաբանեաց: Սորին աղագաւ սքանչելին Պաւղոս զիշխանութիւն աւետարանչացն քարոզելով գոչեաց՝ ասելով. «Արդ, յայտնեցաւ, ասէ, պետութեանց եւ իշխանութեանց երկնից ի ձեռն եկեղեցւոյ բազմազան իմաստութիւն Աստուծոյ» (Եփես. Գ 10): Եւ տես դու ինձ զիմաստութիւն Աստուծոյ, թէ որպէս ըստ մեզ զիջանելով իմաստասիրեաց զմերն փրկութիւն յԱստուած արուեստից ընտրելով զաշակերտսն իւր, քանզի իբրեւ ի խորս ծովու պատուիրանազանցութեան աղագաւ մոլեգնութեամբ հեղձաւ մարդկային բնութիւնս, եւ պէտք էին նմա ձկնորսաց, վասն այնորիկ ընտրեաց կոչմամբ զՊետրոս եւ զԱնդրէաս, եւ զորդիսն Զբեղ[ե]այ. «Մի՛ երկնչիք, ասէ, յայսմհետէ զմարդիկ որսացէք ի կեանս»: Մաքսաւորեաց բանսարկուն զանմահութիւն Ադամայ, պէտս էր նմա աւետարանական մաքսաւորութիւն, վասն այնորիկ ընտրեաց զՄատթէոս հանդերձ այլովք ընկերովքն, զոր եւ փրկութեան արժանաւորեաց, եւ ի խնդիր կորուսելոցն առաքեաց: Զգեցոյց պատուիրանազանցութիւն զմաշկեղէն պատմուճանս փոխան լուսեղէն սգեստուն. պէտք էին այսպիսւոյ արուեստաւորի, վասն այնորիկ ընտրեաց զերանելին Պաւղոս, որ ձեւէով բանին Հատանէր զմահա-

ցու ախտն, այլ եւ զգեստ ոչ զառաջինն, այլ զարմանալիս իմն զՔրիստոս զգեցուցանէր. «Որք ի Քրիստոս մկրտեցայք զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղատ. Գ 27): Նա եւ զցրուեալս եւ զորոշեալս կենդանաւոր շնորհաւքն իբրեւ արուեստիւ ի մի միաւորութիւն կաթողիկէ եկեղեցւոյ ժողովեալ միաւորեաց: Ըմբռնեալ էր մարդկային բնութիւնս սաստիկ ջերմութեամբ ախտիւք, պակշտութեամբ, նախանձու, արծաթսիրութեամբ, կռապաշտութեամբ: Վասն այսորիկ յարոյց զաւետարանիչն Ղուկաս Հմուտ մարմնոց եւ Հոգւոց բժշկութեան, զոր եւ երանելին Պաւղոս գրէ. «Ողջոյն տայ քեզ, ասէ, Ղուկաս բժիշկ» (Կողոս. Դ 14): Կամի՞ս տեսանել զնորա հոգեւորական բժշկութիւն, տես եւ զնորա զկամ աշխարհական շրջագայութեան, ախորժե՞ս գիտել, թէ ընդ որքան հիւանդս շրջեցաւ: Տես զգրացիս մեր զհերետիկոսսն, թէ որչափ ախտացեալ են հայհոյութեամբք, քանզի զի՞նչ այլ չար հիւանդութիւնք քան զՀոգւոյն Սրբոյ Հայհոյութիւն, եւ կամ զի՞նչ չար ախտ կայցէ քան զաստուածամարտն լինել առ միաւորեալ աստուածագործն Որդւոյ մարմնաւորութիւն, բայց երանելիս հանդերձ ընկերաւքն իբրեւ ճարտար բժիշկ զերկոցունց կողմանցն Հատանէ զախտ եւ կարգաւորէ զառաջաբերումն, առաջինն ասէ, որ հայհոյէ զՀոգին Սուրբ ոչ ունի թողութիւն (տե՛ս Ղուկ. ԺԲ 10), եւ առ միւսն, որ ոչ պատուէ զՈրդի՝ ոչ պատուի զՀառաւիղն նորա զՀայր (տե՛ս Յովհ. Ե 23): Զձմարտիւ, արդարեւ բժիշկ մեծ է Ղուկաս աւետարանիչն, որ եւ զամենեսին առհասարակ բժշկէ աստուածախաւս վարդապետութեամբն, զթագաւորս եւ զիշխանս եւ զուսմիկս, նա եւ զաշխարհս ամենայն բուժէ յիւրաքանչիւրոց ախտիցն, եւ ոչ այսչափ միայն, այլ եւ բովանդակ զփրկական տնաւրէնութեան զխորհուրդ, զաւետիսն Գաբրիէլի, զԿուսին զերկիւղաձութիւն, զՀոգւոյն Սրբոյ զեկաւորութիւն, զկերպա-

րանն Աստուծոյ, որ թափեաց զինքն ի ծառայի կերպարանս, զանփոփոխելի Աստուածութիւն, զանխառնելի երկուց բնութեանց հրաշափառապէս խառնումն, որ եւ յետ միաւորութեան ոչ եւս Բ (երկուս) բնութիւն, զանկողոպտելի կոսութիւն, զառանց առն զյղութիւն, զանապական ծնունդն: Ասացաւ Կուսին. «Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ» (Ղուկ. Ա 28): Ով ողջոյն, որ ոչ այլ ումեք երգեցաւ, բայց միայն՝ Սրբուհոյն: Ծնաւ Եւա, բայց՝ տրտմութեամբ, ծնաւ Սառա, բայց՝ աշխատութեամբ, ծնաւ Ռեբեկա, բայց՝ ցաւաւք, ծնաւ Հուաքէլ, բայց՝ Հառաչանաւք, ծնաւ Աննա, բայց՝ արտասուաւք, ծնաւ Եղիսաբեթ, բայց՝ ապականութեամբ. Ամենեքին տրտմութեամբ ծնան, քանզի ամենեքին ապականութեամբ յղացան:

Դու միայն ուրախ լեր, որ ես անպարագրելոյն ընդարձակաբար տաճար:

Դու միայն ուրախ լեր, զի որ ի քէն մարմնացաւ, ի բաց եբարձ զամենայն արտաւար յամենայն երեսաց:

Դու միայն ուրախ լեր, Մայր եւ Կոյս. Մայր վասն զի ի քէն ծնաւ այն, որ նախ քան զքեզ եւ զԱստուած յաւիտեանս, եւ Կոյս, վասն զի ճշմարտապէս ծնար, եւ կուսութիւնդ անապական մնաց՝ բարձրագոյն եղեալ քան զաւրէնս բնութեան, վասն զի ի քէն ծնեալն արարիչ է բնութեանս եւ ամենայն գոյութեանց: Երկին, վասն զի զոր երկին եւ երկնից երկինք ոչ պարագրեն, ի կուսական որովայնդ ոչ նեղեցաւ: Աթոռ, վասն զի այն, զոր հրեղէն աթոռքն փայլականացայտ Հնչմամբ ընդունել ոչ բաւէին եւ սրբասաց սերովբէքն հրեղէն բերանաւքն թեւածածուկ եղեալ փառաւորէին, յորովայնի քո բազմեալ, ել աստուածագործ մարմնով զկուսական արգանդդ անապական պահալ: Զայս սոսկալի խորհուրդ Եսայեան յառաջագոյն տեսեալ, գոչեաց ասելով. «Զայն ի քաղաքէ, ձայն ի տաճարէ, ձայն աղաղակի լսելի եղեւ» (Ես. ԿԶ 6):

Զքեզ ասեմ, ո՛վ մարգարէ, անյայտ է նշանդ, խորին իմաստութիւն բանիդ: Եւ արդ, այդպէս իմանալի է «ձայն ի քաղաքէ». «քաղաք» անուանէ զԵղիսաբեթ առաքինութեամբ վարուք վայելչացեալ եւ ճոխացեալ, իսկ «ձայն» նոյն ի նմանէ ծնեալ Յովհաննէս, որ եւ ձայն կոչեցեալ Բանին ասելով, եթէ՛ «Ես ձայն բարբառոյ յանապատի եմ» (Յովհ. Ա 23)՝ պատրաստել զճանապարհ Բանին: Իսկ «աղաղակ» անուանէ զիսայաւան յորովայնի, որ իբրեւ աղաղակաւ խայտալովն վկայէր (տե՛ս Ղուկ. Ա 41), եւ յետոյ յայտնապէս ձայնէր, թէ՛ «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա 29): Իսկ «ձայն ի տաճարէ լսելի եղեւ». «տաճար» անուանէ զերջանիկ Կոյսն, եւ «լսելի եղեւ»-ն նշանակէ նախ քան զցաւս երկանց ծնանելն զբարձաւղն ցաւոց եւ աշխատութեանց: « Եւ ծնաւ արու» (Ես. ԿԶ 7), ըստ մարգարէին, այսինքն՝ ոչ ըստ մարդկան առ սակաւ սակաւ զկենդանական առնուլ զգոյութիւն, այլ Բանն Աստուած, զի կատարեալ ստեղծ ինքեան մարմին բովանդակ Հոգւով եւ մտաւք եւ ամենայն, որ ինչ ի մարդ, բաց ի մեղաց, որպէս հրեշտակապետին աւետարանական Հոգւոյն Սրբոյ եկաւորութեամբն «Բանն մարմին եղեւ» (Յովհ. Ա 14) Յիսուս աւետարանչին ձայնի, եւ որպէս հրեշտակն Յովսէփայ աւետարանէր, թէ՛ «Որ ի նմա ծնեալն է, ի Հոգւոյն Սրբոյ է» (Մտթ. Ա 20), այսինքն՝ Հոգին Սուրբ եւ Բանն, որ միացան ի մարմնի հրաշափառապէս յաւրինէր զաստուածագործ մարմին, եւ ոչ առ սակաւ սակաւ բաղկացութեամբ, որպէս պահանջէ բնութիւնս: Այս է, զոր ասէ մարգարէն, եթէ՛ «Ծնաւ արու» (Ես. ԿԶ 7), այսինքն՝ կատարեալ եւ արտաքոյ քան զցաւս բնութեանս երկանց: Զայս ած սքանչելի խորհուրդս երանելի աւետարանիչն Ղուկաս մեզ յայտնեաց զաւետարանութիւն հրեշտակապետին առ կոյսն Մարիամ աստուածաբանելով. «Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ»: Ով տաճար Հոգեւոր, լայ-

նագոյն գտար քան զերկինս, քանզի ոչ միայն զանտանելին երկնի ընդունիս, այլ եւ ընդարձակագոյն բացեր զաւտարասիրութեանդ զգող: Զառաքեալսն առաքաստես, զաւետարանիչսն Հանգուցանես, զվախճանեալսն Հիւրընկալես, զժողովուրդս Հաւատացելոց ի ներքս ժողովես, զհիւանդացեալսն բժշկես, զբացկացեալսն հեղութեամբ միաւորես, զծնունդն Հայրական ոչ Հարցաքննես, զկուսական արգանդն պատուես, եւ զծնեալն ի նմանէ Աստուած դաւանես, եւ գոչեա որդւոց եկեղեցւոյ ասելով. Զհետ երթայք խաղաղութեան ամենայնիւ եւ զսրբութեան շնորհաւքն Քրիստոսի, ընդ որում Հաւր, միանգամայն եւ Սուրբ Հոգւոյն փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն

ՊՐՈԿՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ
ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊԱԻԼՍԻ
ՆԵՐՐԱՂՆԵԱՆ Ի ՍՈՒՐԲԵ ՍՏԵՓԱՆՈՍ
ՆԱԽԱՎԿԱՅՆ ԱՍԱՑԵԱԼ¹

Երեւելի արեգակնս² ընդ երկնաւ³ ծագելով զարուսեակն եւս ընդ ինքեան ունեւրով ծագէ: Բայց արդարութեան իսկ արեգակն ի ծոցոյ կուսական⁴ արգանդէ⁵ ծագեալ աստեղական դասուց առ ի յընթացակից լուսոյ ոչ կարաւտանայ, այլ զՍտեփանոս Նախավկայ կցորդ ծագման անմա-

հից⁶ ճառագայթիցն առնէ: Նա⁷ ի Հիւսիսական⁸ կողմանէն զՀարաւային ճանապարհն ընթանալով, երբեմն ժողովէ եւ երբեմն լայնացուցանէ զչափ աւուրցն: Իսկ սա⁹ յերկնից ի մեզ¹⁰ գալստեամբն իւրով զարդարութիւն աճեցուցանելով անպակասելի պահեաց զլոյսն իւր¹¹: Նա¹² խաւարի Հալածիչ, իսկ սա¹³ ի մեղաց վերստին փոխադրիչ: Նա¹⁴ երկոտասան ժամուցն լուսատու, իսկ սա յաւիտենից աստեղականոց¹⁵ կա: Նա¹⁶ աստեղաւք ճանապարհորդէ, իսկ սա¹⁷ ընդ¹⁸ առաքելաւքն փայլէ: Նա¹⁹ ի ձեռն ժամանակաց պարաշրջի, իսկ սա²⁰ մարգարէիւք եւ առաքելովք²¹ քարոզի: Նա²² զընթացիցն զժաման²³ ընդ ինքեան ունելով սկսանի, իսկ սա²⁴ բանիւք՝ զեկեղեցի²⁵ մեծացուցանէ եւ զարդարէ զնա ի վերայ կամարաց կենդանագիրք²⁶ բոլորածեւ նկարագրեն²⁷: Իսկ զսա²⁸ աստուածաբանողք ի մտուր Հանգուցեալ պատմեն. ի մտուր, որ երկնից է

6 Բ ծագակից] Ախաւկայ...ամմաից
7 Գ արեգակն] Աս
8 Գ հիւսիսային
9 Ա սա մեզ Գ Քրիստոս] սա
10 Ա > ի մեզ
11 Բ > իւր
12 Գ արեգակն] Աս
13 Գ Քրիստոս] սա
14 Գ արեգակն] Աս
15 Զիք ՆԲՀ
16 Գ արեգակն] Աս
17 Գ Քրիստոս] սա
18 Ա > ընդ
19 Գ արեգակն] Աս
20 Գ Քրիստոս] սա
21 Բ առաքելաք
22 Գ արեգակն] Աս
23 Բ ժամն
24 Գ Քրիստոս] սա
25 Բ զեկեղեցի բանիւք
26 Գ կենդանակերպք
27 Ա Գ կենդանագրեն] Ակարագրեն
28 Գ Քրիստոս] զսա

1 Աղբիւրներ.
Ա = ՄՄ, ձեռ. 5349, ք. 173 ա - 179բ
Բ = ՄՄ, ձեռ. 6196, ք. 497 ա - 499ա
Գ = ՄՄ, ձեռ. 3791, ք. 699բ - 703ա
Խորագիր՝ Բ Երանելոյն Պրոկղի եպիսկոպոսի Կոստանդնուպոլսի ներքոյեան ի սուրբն Ստեփաննոս Գ Երանելոյն Պրոկղի եպիսկոպոսապետի Կոստանդնուպոլսի ներքոյեան ասացեալ ի սուրբ Ստեփաննոս Նախավկայն
2 Բ արեգակնս Գ արեգակն
3 Բ երկնիւք
4 Ա ծոցական] ծոցոյ կուսական
5 Գ յարգանդէ

նմանեալ¹, ի մտուր, որ քերովբէից է Հաւասարեալ,

2 ի մտուր, որ անճառելի Աթոռոյն³ է նմանեալ,

4 ի մտուր, որ զանմազ⁵ կերակուրն բանաւորաց յինքեան պարունակէ,

ի մտուր, որ զկեանս ամենեցուն յինքեան ունի,

ի մտուր, որ զբարձոյն ամենեցուն բառնայ,

ի մտուր, որ Համաւրէն ամենայն աշխարհի լայնագոյն է, զի զոր աշխարհս ոչ տանի, սա անդորրապէս բառնայ⁶,

ի մտուր, որ աստեղք տիւրնթացիւ պատմի մեզ⁷

ի մտուր, որ զսեղանն սուրբ յինքեան նկարագրէ⁸,

ի մտուր, որ եկեղեցոյ⁹ զայրն նմանեցուցանէ:

Եկայք այսուհետեւ մեք ընդ բարեպաշտից մոգուցն նախաձայնեցուք¹⁰ զեկեղեցի¹¹ փոխանակ Բեթղազեմի¹² իմասցուք¹³ եւ փոխանակ այրին զքահանայականն ողջունեցուք զբեմբ¹⁴, եւ¹⁵ փոխանակ մարտն սրբոյ¹⁶ սեղանոյն երկիր պագ-

1 Բ նման է] է նմանեալ
2 Բ յաւասարեալ
3 Գ աթոռոցն
4 Բ > ի ...նմանեալ
5 Բ զանբաւ] զանմազ
6 Ա բառնայ ի մտուր, որ յինքեան զսեղանն սուրբն Ակարագրէ
7 Ա Բ > ի մտուր, որ աստեղք...մեզ
8 Գ Ախաւրդէ] յինքեան Ակարագրէ
9 Ա Գ եկեղեցի
10 Ա Բ Ախաւրդէ] Ախաւրդէ
11 Ա > զեկեղեցի
12 Գ Բեթղէմի
13 Ա Գ իմասցուք զեկեղեցի
14 Գ բեմ
15 Գ > եւ
16 Գ > սրբոյ

ցուք¹⁷, եւ փոխանակ տղայացելոյ Բանին զիրկս արկցուք ի ձեռն զտղայսն¹⁸ աւրհանելոյ Հացին: Իսկ¹⁹ ի վերայ այսր ամենայնի զառ ի Ստեփանոսէ յայսմ աւուր թագաւորեցելոյ²⁰ պատմեալ փառաւորեսցուք²¹: Ո՛ր զարմանալեացս²² Հրաշափառ իրի. երեկ ծնանի, այսաւր Ստեփանոս նմա²³ նախաբերի²⁴:

Ստեփանոս՝ Համանուն վկայ,
Ստեփանոս՝ պսակհոգեւոր,
Ստեփանոս՝ ինքնահիւսակ թագ,²⁵
Ստեփանոս՝ ինքնագործեալ զարդ,
Ստեփանոս՝ ինքնաբողբոջ գլխոյ իւրոյ յատուկ պսակիչ,
Ստեփանոս՝ բազմածաղիկ Հաւատոյ բոյս,
Ստեփանոս՝ սիրոյ անուշահոտ վարդ²⁶
Ստեփանոս՝ յուսոյ անթառամ²⁷ ծաղիկ
Ստեփանոս՝ մտերիմ սիրելոյ²⁸ ստուգապէս ընդունող,
Ստեփանոս՝ մշտաբեր այգոյն բազմաբեր որթ,
Ստեփանոս՝ անմահութեան որթոյն²⁹ քաղցրաճաշակ ողկոյզ,
Ստեփանոս՝ բարձրացելոյն ի Խաչին ճուղ³⁰ երկնահաս,

17 Ա Գ երկրպագեցուք] երկիր պագեցուք
18 Բ տղայոյն Գ տղայոցն
19 Ա > Իսկ
20 Գ զթագաւոր
21 Ա թագաւոր պատմեցուք փառաւորեալ
22 Ա Գ Ո՛վ զարմանալի թագաւոր ի
23 Գ ոստ] նմա
24 Զիք ՆԲՀ, բայց Ախաւրդէմ
25 Գ թագ, Ստեփանոս ինքնաբողբոջ գլխոյ իւրոյ յատուկ պսակիչ: Ստեփանոս բազմածաղիկ հաւատոյ բոյս
26 Ա Գ զարդ] վարդ
27 Ա Անթառամ յուսոյ
28 Ա Բ սիրոյ] սիրելոյ
29 Բ Գ տնկոյն] որթոյն
30 Բ ճեղ

Ստեփանոս՝ ամենայն բարեաց բանից¹ եւ գործոց լրումն,

Ստեփանոս՝ խոստովանութեան անխզելի² աշտարակ,

Ստեփանոս՝ համբերութեամբ անսասանելի նահատակ

Ստեփանոս՝ ժուժկալութեան³ խաչագղեաց զինուոր,

Ստեփանոս՝ բարեպաշտութեան⁴ հոգեւոր զաւրական,

Ստեփանոս՝ ընդդէմ քրիստոսասպանիցն անպարտելի դիմամարտ⁵,

Ստեփանոս աստուածաշարչար ազգին յանդիմանիչ անվեհեր⁶: Այլ⁷ քանզի նուազութեան մտաւք իմովք⁸ յաւժարեցի ի վաստակ իմ՝ հիւսել պսակ Ստեփանոսի՝ առաջին արժանաւոր մարտիրոսին⁹ եւ յաղթող զաւրականին Քրիստոսի, եւ զարժանաւոր¹⁰ հիւսման երբէք¹¹ բուռն ոչ բաւեցի¹² հարկանել: Այսուհետեւ աստուածաշին գրովք զսա պսակեալ սկսանիմք:

«Ստեփանոս, ասէ¹³, այր՝ լի շնորհաւք եւ զաւրութեամբ առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն» (Գործք Զ Ծ): Որպէ՛ս գովեցից զպսակս¹⁴, զո՞ր շնորհ¹⁵ սմա տամք, զի՞նչ հատուցից Ստե-

փանոսի պատիւ¹⁶, որ զամենայն դասս¹⁷ վկայից պսակեաց: Զի՞նչ կարացից վերստին ասել, որ¹⁸ ի շնորհաց Հոգւոյն գոյ¹⁹ լցեալ: Որո՞վ բանիւք զարդարեցից զպայծառացեալն աստուածային զարդուք²⁰: Որո՞վ ձայնիւք հրաշացուցից²¹ զլցեալն բիւրովք²² սքանչելեաւք:

«Ստեփանոս լի շնորհաւք եւ զաւրութեամբ», ասէ, շնորհք եւ զաւրութիւն²³, որ զպսակս զայս հիւսեցին²⁴, եւ յերկոցունց ձեռաց ի բարուք²⁵ պատերազմս յայս զարդարեցին²⁶. մինն արդեաւք ի հաւատս զսա, իսկ միւսն ի համբերութիւն զսա հաւանեցուցանէր, զմինն ի սքանչելիս, իսկ միւսն յուղղութիւնսն²⁷ պատրաստէր²⁸. Մինն ի համարձակութիւն, իսկ միւսն ի համբերութիւն յուժարեցուցանէր²⁹. շնորհ եւ զաւրութիւն համապատիւ տնկուած³⁰, շնորհ արմատուստ³¹, շնորհ³² եւ զաւրութիւն՝ համաժամանակ բոյս³³, շնորհ եւ զաւրութիւն՝ միակամ լծակցութիւն, շնորհ եւ զաւրութիւն՝ համաբարբառ ձայնակցութիւն, շնորհ եւ զաւրու-

16 Ա Ստեփանոս պատիւս
17 Բ գլուխ] դասս
18 Բ > որ
19 Բ գոյ Գ քոյ] գոյ
20 Բ > զարդարեցից ...զարդուք
21 Ա սքանչացից Գ սքանչացուցից] հրաշացուցից
22 Ա բիւրովք (Բ բիւրուք) զլցեալն Գ բիւր
23 Բ զաւրութիւն ասէ
24 Ա հիւսիմ Գ հիւսիմ մմա
25 ԱԲ > բարուք
26 Գ յարդարեցին
27 Ա ի յուղղութիւնսն
28 Գ պատրաստել
29 ԲԳ > միմն ի համարձակութիւն... յուժարեցուցանէր
30 Բ տնկուած. այսպես և այլուր
31 Բ > շնորհ արմատուստ
32 Ա շնորհ միակամ լծակցութիւն, շնորհ համաբարբառ լծակցութիւն] շնորհ...տունկ
33 Գ շնորհ եւ զաւրութիւն համաժամանակ բոյս, շնորհ եւ զաւրութիւն համարմատուստ] շնորհ եւ զաւրութիւն...բոյս

1 Ա բանի
2 ԱԳ անչաղթելի] անխզելի
3 ԱԲ ժուժկալութեամբ
4 ԱԲ բարեպաշտութեամբ
5 Բ անպարտելի ի մարտ] անպարտելի դիմամարտ
6 Գ անվեհեր յանդիմանիչ
7 Բ > այլ
8 Ա > իմովք
9 ԱԲ մարտողիմ] մարտիրոսիմ
10 Բ զարժանաւորութեան
11 Բ երբեմն] երբէք
12 Ա կարացի] բաւեցի
13 Բ > ասէ
14 Բ զսա] զպսակս
15 Բ շնորհք Գ շնորհս

թիւն՝ երկոտասան¹ հաւատոյ տունկ², շնորհ եւ զաւրութիւն³ գեղեցիկ արտեւանունք ուղղափառութեան, շնորհ եւ զաւրութիւն⁴՝ համապատիւ զինուորութիւն Քրիստոսի, շնորհ եւ զաւրութիւն Ստեփանոսի արթուն պահապան:

«Ստեփանոս, ասէ⁵, այր լի շնորհաւք եւ զաւրութեամբ»⁶: Բուրվառ շնորհացն էր սուրբն⁷ Ստեփանոս՝ զսրբութեանցն պարաբուրելով զխունկն⁸: Աղբիւր շնորհաց⁹, որ¹⁰ անդադար մշտաբուր զառաքինութեանն Հոսէր զվտակս բարեպաշտութեամբ գերուսաղէմ մաքրէր յորդաբուր հոսանաւք առ ամենայն ընդդիմամարտ¹¹ եւ հակառակող զաւրութիւնսն, զինուորէր ճգնաւորական շնորհաւք, ախոյան հզարէր¹² առ ամենայն խոռովութիւնս¹³ ի վերայ յարձակմանց դիմակաց քարածգութեանց՝ հալածանացն համբերելով¹⁴, սքանչելեաւքն պարծելով¹⁵, զախոսն հալածելով, զցաւսն բժշկելով, զդեւսն հանելով¹⁶, զաղքատսն¹⁷ պաշտելով, զհիւանդսն¹⁸ մխիթարելով, զայրիսն սփոփելով, զորբսն նախախնամելով, զրկելոցն պատսպարան լինելով, զքարոզսն¹⁹ պայծառացուցանելով,

զհաւատսն վերստին պատմելով²⁰, զխաչեալն աստուածաբանելով, ի բեւեռսն պանծալով²¹, զգեղեցն գովելով, զկապանսն պատուելով, զգեղարդն քարոզելով, զկողսն, որ յաղագս աշխարհի խոցեցաւ, բարուք²² համբաւելով²³, մահասպան չարչարանացն երկիր պագանելով, ապտակաւն զուարճանալով, զՊիղատոսի դատաւորութիւնն ոչ ամաւթս²⁴ համարելով, զգերեզմանն ոչ թաքուցանելով, յարութեամբն մեծապանծ լինելով, զհրեայս յանդիմանելով, զփարիսեցիսն յամաւթ առնելով, զսաղուկեցիսն նախատելով, զդպիրսն կարկելով, զմարգարէական գիրսն բանալով, եւ փայլեալ ի նոսա զՔրիստոս քարոզելով, ի վերայ խաչողացն սպառնալով, անաւրէն եւ ամբարիշտ յարձակողացն ի վերայ սաստելով, հաւատով անհաւատիցն յաղթելով, համաւրէն հրէիցն եկելոցն յաղագս քարոզութեանն պատերազմելով²⁵:

«Յարեան ոմանք ի ժողովրդեանն, որ կոչէր լիբիացուց եւ կիւրենացուց եւ յաղեքսանդրացուց եւ որ²⁶ ի կիւլիկեցուց եւ յԱսիայ²⁷ վիճել ընդ Ստեփանոսի, եւ ոչ կարէին զդէմ ունել իմաստութեանն եւ Հոգւոյն, որով խաւսէր» (Գործք Զ 9):

Բազում էին²⁸ ալիք ծովուն, այլ երկնային է²⁹ նաւապետն³⁰: Զաւրացեալ էին Հողմոցն շնչմունքն³¹, բայց անխախտելի է նաւս: Պէս պէս են մրրիկքն³², իսկ սիւն

1 ԱԲ > երկոտասան
2 Ա շնորհ միակամ լծակցութիւն, շնորհ համաբարբառ լծակցութիւն] շնորհ...տունկ
3 Ա > եւ զաւրութիւն
4 Ա > եւ զաւրութիւն
5 Բ > ասէ
6 Գ > Ստեփանոս ասէ...զաւրութեամբ
7 Բ > սուրբն
8 Բ զխունկն Գ զխունկս
9 Գ շնորհաց էր Ստեփանոս
10 Բ > որ
11 Գ դիմամարտսն
12 ԱԲ > էր
13 Բ > զխոռուրէր...խոռովութիւնս
14 Գ համբերող
15 ԲԳ պարելով] պարծելով
16 Ա հալածելով] հանելով
17 Գ զաղքատս
18 Գ զհիւանդս
19 Բ զքարոզմ

20 Բ պաշտելով] պատմելով
21 Ա պարծելով] պանծալով
22 Ա բարիք
23 Ա համարեցաւ Գ համբերելով] համբաւելով
24 Գ ամաւթ
25 Գ պատերազմեալ
26 Գ որք
27 Բ կիլիկիայ] կիլիկեցուց եւ յԱսիայ
28 Բ են
29 Ա էր
30 Գ էր նաւաւարս
31 ԱԳ հնչմունք] շնչմունք
32 Բ ալիք] մրրիկքն

նաւիս ի վերուստ¹ ամրացեալ է²: Ոչ կարենն ալիք ծովու յերկինս³ վերանալ եւ ոչ դառն շնչմուկնք ընդ երկնային հողմոցն⁴ մարտնչել, ոչ կարէ լուծանել նաւ, որ ի կենաց նաւավարի:

Արդ, յաղագս որո՞յ էր խնդիրն, որք⁵ վիճէին ընդ պսակեալ զինուորին⁶ Քրիստոսի, եւ ոչ հանդուրժէին իմաստութեանն եւ Հոգւոյն, որով խաւսէր յաղագս անճառաբար մարմնացելոյն⁷, յաղագս բնութեան գեր ի վերոյ քան⁸ զբնութիւն ծնիցելոյն⁹, յաղագս անհասապէս գրեցելոյն¹⁰, որ հրաշափառապէս¹¹ գործի խորհուրդ, եթէ զիարդ, կամ որպէս¹² առանց առն հարսն կամ որպէ՞ս առանց խառնուածի կոյսն մայր լինի, կամ որպէ՞ս յետ յերկանց կոյս գտանի դարձեալ, կամ որպէ՞ս բնութիւն սքանչելեացն տեղի տայ, կամ որպէ՞ս առ Մարիամ¹³ գյատուկ սահմանս իւր ոչ խնդրէ, կամ որպէ՞ս անտանելին որպէս տղայ հաւաքի, կամ զիա՞րդ¹⁴ յորովայնի գոլով ընդ ամենայն արարածս ստեղծանէ զտղայսն, կամ որպէ՞ս ծնանի, որ ամենեցուն շնորհէ զծնունդ, կամ որպէ՞ս զիանայր եւ ստնդիայ¹⁵ աղբիւրս կաթին բղխէր¹⁶, կամ որպէս աւրինացն եւ շնորհաց¹⁷ լինէր ընտրութիւն, կամ որպէս

մինն դատապարտէ, իսկ¹⁸ միւսն քաւէ, մինն զմիւսն քաւէ¹⁹, մինն զմեղս խառնէ²⁰, իսկ միւսն արտաքս ջնջէ, մինն զսուրն ի վերայ յարձակեցուցանէ, իսկ միւսն զողորմութիւն կարկառէ²¹, մինն զկարգ դահճի ունի, իսկ միւսն թագաւորաբար իշխէ, մինն դատապարտելոյ որոգայթ դնէ, իսկ միւսն թագաւորաբար իշխէ եւ ի միւսումն միւսն²² մարդասիրապէս²³ զմահ եւ զորոգայթ խափանէ:

Արդ, այնչափ Ստեփանոսի յաղագս շնորհացն աստուածաբանելով առ հրեայսն աստուածամարտսն, որք²⁴ ըստ գրեցելոցն, յափշտակեցին զնա եւ ածին²⁵ յատեան: Ուր յափշտակութիւն է՝ անդ հրեական միաբանութիւն²⁶, ուր յափշտակութիւն է՝ անդ գունդք աստուածատեացք²⁷, ուր խոկումն սպանութեան է՝ անդ դպրաց անաւրինաց է ժողով: Ընդէ՞ր պղծէք զաթոռն Մովսէսի, ո՞վ անաւրէնք հրեայք²⁸, ընդէ՞ր գարշեցուցանէք²⁹ զաթոռն, զոր աւրէնքն զարդարեցին: Նա ասաց՝ մի՛ սպանանիցես եւ մի՛ սուտ վկայիցես. դուք երկոցունց յանցաւոր³⁰ գտայք եւ խափանիչք³¹ պատուիրանացը³², եւ ոչ կատարիչք³³, եւ կա-

18 Բ եւ] իսկ
19 Ա > միմն զմիւսն քաւէ
20 ԱԲ > միմն զմեղս խառնէ
21 Ա միմն զսուրն ի վերայ արձակեցուցանէ, իսկ միւսն զողորմութիւն կարկառէ, միմն զմեղսն խառնէ, իսկ միւսն արտաքս ջնջէ] իսկ միւսն արտաքս...կարկառէ
22 Բ > թագաւորաբար...զմիւսն
23 Գ > մարդասիրապէս
24 Բ որ
25 Ա > եւ ածին
26 Ա > անդ
27 Գ քրիստոսատեացք] աստուածատեացք
28 ԱԲ > հրեայք
29 ԱԳ գարշելի առնէք] գարշեցուցանէք
30 ԱԳ սուտ] յանցաւոր
31 ԱԲ > եւ խափանիչք
32 Գ պատուիրանացը
33 ԱԲ > եւ ոչ կատարիչք

1 Գ վերուստ է
2 ԱԳ > է
3 Ա ի յերկինս
4 Գ հողմոցն
5 ԱԲ որ
6 Բ զինուորն
7 Գ > յաղագս ...մարմնացելոյն
8 Գ որ քան
9 Բ ծանուցելոյն] ծնիցելոյն
10 Բ > յաղագս...գրեցելոյն
11 Ա հրաշագոյն Գ հրաշափառագոյն
12 Բ > կամ որպէս
13 Բ Մարիամայ
14 ԲԳ որպէս
15 Բ ստնդիաց Գ ստնդիացոց
16 Գ բղխէ
17 Ա շնորհ

ցուցէք սուտ վկայս¹, որք² ասէին. Այրս այս ոչ դադարէ խաւսել բանս հայհոյութեան զտեղոյն սրբոյ եւ զաւրինաց: Գիտելով քո, եթէ զաւրէնս պահես, եւ զքո անգիտութիւնդ ոչ գիտես, թէ լուծանես զաւրէնսն³: Ձո՞ր բան խաւսիս ո՞վ եղկելի եւ անգէտ հրէայ⁴. նոքա ասեն. Լուաք մեք⁵ ի դմանէ, զի ասէր, թէ Յիսուս Նազաւրեցի, նա քակեսցէ զտեղիս զայս եւ փոփոխեսցէ զաւրէնսն, զոր ետ մեզ Մովսէս, եթէ՞ «լուաք ի դմանէ բանս հայհոյութեան ի Մովսէս եւ յԱստուած» (Գործք 2 11):

Այժմ ընդ Մովսէս զարմանայք⁶, ո՞վ զրպարտողք, այժմ որպէս զաւրէնսդէր⁷ պատուես, յորմէ, մինչ կենդանին էր, գարշէիր:

Այժմ որպէս նախանձորդ աւրինաց ջեռնուս, այժմ ջատագով լինես Աստուծոյ այժմ որպէս հայհոյելոյ Աստուծոյ վրէժխնդիր լինիս⁸, ո՞չ դու յառաջ քան զամենայն ի վերայ Մովսէսի քարինս յարձակէիր, ո՞չ դու հանապազ փոխանակ Աստուծոյ զբարինս եւ զփայտս պաշտէիր⁹ (Հմմտ. Երեմ. Բ 27), ո՞չ դու երկիր պագանէիր, որթոյն իբրեւ Աստուծոյ¹⁰: Արդ, զնա սպանանես¹¹ եւ դարձեալ¹² կեղծաւորի՞ս խղճիւ:

Այժմ հեղուս զարիւն ամբի՞ժ աստուածապաշտութիւն համարելով, դու այժմ եւ յայնժամ զճշմարտութիւնն խառնակես:

Յայնժամ համարձակապէս թշնամանէիր եւ այժմ անմաքրապէս պատուես, որ

1 Ա վկայս սուտս
2 Բ որ
3 ԱԲ > Գիտելով քո...զարէնսն
4 ԱԲ զոր բանս խաւսի] զոր բանս խաւսի...հրեայ
5 Բ արդեալք] մեք Գ > մեք
6 Բ զարմանք
7 Գ զարիմարի
8 ԱԲ > այժմ որպէս փայտելոյ...լինիս
9 Ա պատուէիր] պաշտէիր
10 ԱԲ > ոչ դու երկիր պագանէիր...Աստուծոյ
11 Բ սպանես
12 Բ դարձեալ խղճուկ

չարաչար խոկայիր զարիւն գնել, եւ այժմ ախորժես փախչե՞լ ի պատժոց: Որ հանապազ սուտ վկայէիր եւ ասէիր¹³ վասն արդարոյն¹⁴, եթէ՞ « Լուաք, զի ասէր, եթէ Յիսուս Նազաւրեցի՞ նա քակեսցէ զտաճարս¹⁵ զայս եւ փոխեսցէ զաւրէնսն, զոր ետ մեզ Մովսէս» (Գործք 2 14): Եւ զիա՞րդ եթէ սպանանես զՍտեփանոս՝ տեղիդ այդ ո՞չ քակեսցիր¹⁶: Եւ արդ, թէ սպանանես զՍտեփանոս, տեղիդ այդ ո՞չ քակիցիր: Եւ արդ դու պինդ պահես զտեղիդ զայդ շէն. քաւ եւ ոչ կարես¹⁷: Վասն այդորիկ¹⁸ մանաւանդ քակեսցիր¹⁹ տեղիդ այդ, զի զՏէրն եւ զճառայն նորա²⁰ սպանէք²¹, զի ընդ հովիւն եւ զոչխարն գենեցիք²², զի ընդ թագաւորին²³ եւ զինուորն սպանէք²⁴. Ոչ կարէ կալ քաղաք²⁵, որոյ թագաւորն մահուան²⁶ վիճակի, ոչ եւս պատուի տաճար, յորում տիրական սպանումն կատարի: Միթէ՞ Ստեփանոս ետ զվճիռս զայս, թէ՞ «Ահաւասիկ թողեալ լիցի տունդ ձեր աւերակ» (Մտթ. ԻԳ 38), եւ թէ՞²⁷ «Մի՛ մնասցէ քար ի քարի վերայ, որ ոչ քակեսցիր» (Մտթ. ԻԴ 2, Ղուկ. ԻԱ 6): Ո՞վ անիրաւի. Աստուած վճիռ տայ եւ մա՞րդ դատապարտի. Քրիստոս հրամայէ եւ Ստեփանոս հատուցանէ զվրէժն, Թագաւոր ճշմարտէ զիրան եւ զինուորն մե-

13 Ա ասես
14 Գ արդարոյս
15 Ա զտեղիս] զտաճարս
16 Գ քակիցի
17 ԱԲ > եւ արդ, դու պինդ պահես...ոչ կարես:
18 Բ այնորիկ
19 Գ քակի
20 ԱԲ > նորա
21 Ա Գ սպաներ
22 Ա զոհեցեր] զգեցեր
23 Բ թագաւորն
24 Ա սպաներ Գ զոհեցեր
25 Ա քաղաք կալ
26 ԱԳ սպանման] մահուան
27 Բ > թէ

ղաղբի¹: Դու եղբր այնպիսի² բացասութեան³ պատճառ: Ո՛վ հրեայք, կանգնեցէք⁴ խաչս եւ զԵրուսաղէմ վերստին կործանեցէք⁵, կառուցէք⁶ բեւեռս եւ զտաճարն խախտեցէք⁷, եւ ասացէք⁸. «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց» (Մտթ. Իէ 25). Ընկալ այսուհետեւ զվրէժս, զոր դու սահմանեցեր:

«Արդ, լցեալ, ասէ, Ստեփանոս Հոգւովն Սրբով, Հայեցեալ յերկինս, ետես զՅիսուս, զի կայր ընդ աջմէ Աստուծոյ» (Գործք է 55): Պաւղոս «նստեալ», ասէ, զնա ընդ աջմէ Աթոռոյն մեծութեան ի բարձունս (տե՛ս Եբր. Ը 1): Արդ, զի՞նչ է պատճառ կալոյն այժմ⁹ ընդ աջմէ Աստուծոյ, ո՞ր փոյթ եղեւ¹⁰ նմա յառնելն ի Հայրական Աթոռն¹¹. տեսանէր զգինուորն, զի նահատակելով պատերազմէր¹², եւ ի¹³ շնորհել նմա¹⁴ կամելով¹⁵ գյաղթութիւն յառնէ, տեսեալ գյաւղազնաց նաւավարն փութալ ի նաւահանգիստն զերկնայինս¹⁶ բանայր նմա: Մի՛ երկնչիր, ասէ, ո՛վ Ստեփանոս, զմարտդ¹⁷ քո ոչ առնեմ առանց բրաբրոնի՝ պսակի¹⁸ ձեռն աւզնական ու-

նիս¹⁹ խորհելով տալ քեզ, յարեա Աթոռոյ իմմէ: Յիս ի խաչեալս²⁰ Հայելով Համարձակ լեր ի ճակատուդ²¹: Նա եմ, զոր տեսեր մարմնով կախեալ զփայտէ²² եւ բեւեռեալ, սովաւ տամ²³ քեզ գյաղթութիւն, վարձատու եմ վաստակոցդ քոց²⁴, բայց եւ նահատակակից վկայութեան²⁵ քու լինիմ: Ի վերայ խաչին որպէս ի տեղի ճակատու մարտեալ²⁶, վասն զի ի մէջ առցես դու զդիմամարտն քո զբանսարկուն, եւ հերքեսցես: Մի՛ երկնչիր ի քարանցդ ի վերայ քո արկանելոյդ²⁷, զի աշտիճան առ ելս ի յերկինս քարինքդ այդ եղիցին քեզ²⁸, քանզի զգլուխ անկեան վէժս՝ զիս ընդ քեզ ունիս, որ անխախտելի պահեմ²⁹ զշարաշարմար շինուածն յերկնաւոր մշակէն յիս յարմարելոյ:

Որ կատարեցեր զըզձանս³⁰ նահատակին քո, առաջին վկային³¹ սրբոյն Ստեփանոսի, Քրիստոս Աստուած նախագործելով յէական լուսոյդ զփառս պսակի նորա, փոխանակ-մարտին շնորհելով գյաղթանակ:

Պարգեւեա տաւնողացս³² զթողութիւն յանցանաց³³ եւ զվհատելոյ անձին իմոյ ներեա Տէր³⁴, եւ լուսաւորեա զհոգիս մեր բա-

1 Ա մեռանի] մեղադրի
 2 ԲԳ այսպիսի
 3 Բ բանից ասացութեան
 4 Գ կանգնեցեր
 5 Գ կործանեցեր
 6 Գ կառուցեր
 7 Գ խախտեցեր
 8 Ա Ով հրեայ, կանգնեցեր...կործանեցեր, կառուցեր...խախտեցեր եւ ասացեր] Ով հրեայք...եւ ասացէք
 9 ԱԲ > այժմ
 10 Բ էր
 11 Ա ի հայրական Աթոռոյն յառնել
 12 Բ նահատակել պատերազմաւ
 13 ԲԳ > ի
 14 Բ > նմա
 15 Ա կամելով նմա
 16 Ա գերկինս
 17 Ա զմարտ
 18 ԱԲ > պսակի

19 Բ աւզնակաւորութեան] աւզնական ունիս
 20 Բ խաչեցեալս
 21 Գ ճակատուն
 22 ԱԳ կախեալ զփայտէ մարմնովս(Գ մարմնով)
 23 ԲԳ տաց
 24 Ա > վաստակոցդ քոց
 25 Ա վկայութեամբ
 26 Գ մարտեայ
 27 ԱԲ եկելոցդ
 28 Ա քարկոծողացն] քարանցդ ի վերայ... քեզ
 29 Ա ունիմ] պահեմ
 30 Ա ըզձանս
 31 Բ նահատակին] վկային
 32 Բ տաւնողացս մեզ
 33 Բ մեղաց] յանցանաց
 34 Բ > եւ զվհատելոյ...Տէր

րեխաւսութեամբ Նախավկային քո: Եւ քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն¹:

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՊՐՈԿՂԻ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՒՊՈԼԻՏԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍՏՈՍՏԻ ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ՀԱՅՐՆ ՅՈՒՆԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԵՒ ԼՈՒՍԱԻՈՐԻՉՆ ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ²

Ձոր աւրինակ արք ոսկեսէք զծածկեալ գանձ ի տեղւոյ ուրեք գուշակեալ բազում տենչանաւք գործի ի ձեռն առեալ³ անձամբ անձին աշխատին, բրեն եւ անվհերս խոնարհին, իջանեն ի խորսն, յաղազս փութոյ ցանկութեան գանձուցն Հարստութեան, այսպէս եւ քաղցրաբուխ վարդապետութիւն սուրբ Հաւրն մերոյ Յովհաննու⁴ Ոսկեբերանի զառաքինի եւ զիմաստայեղց⁵ արս բազում փափագմամբ յինքն ձգէ ադ ի լրութիւն Հոգեւորական եւ երկնաւոր գանձուցն փարթամութեան: Եւ արդ, մեք՝ ըզձացեալքս⁶ ի նորա խորս առաքինութեանն, գովասանութեամբ արահետել կամելով, բա-

զում մտառու⁷ եւ յաւժարական փութով զնորին աղաւթքն յաւզնականութիւն կոչեսցուք, որպէս զի գանապական գայն ոսկի⁸, որ ոչ յերկրէ ի վեր բղխէ նիւթ, եւ դարձեալ յերկիր ապականի, այլ յերկնից իջեալ եւ առ երկինս վերաբերէ, գայն ի յանձինս մեր ամբարեսցուք:

Եւ արդ, ո՞ր արդեւք գովասանութիւն մերձենայ մարդկային, յայն որ վերացեալ բարձրացեալն էր քան զբնութիւն մարդկայնոց եւ ամբարձայնոցն⁹ նմանեալ: Այլ թէպէտ եւ այսպէս, սակայն ըստ կարի մերում¹⁰ ընտանասցուք նմա, մերովք¹¹ բայիւք ի նորայոցն առեալ զնիւթ մերոցս գովասանութեանց: Վասն զի եւ որպէս Աստուած անհաս գոյով յամենայն եղականացս, ըստ զրեցելումն «Ո՛վ, ասէ, ետես զնա, եթե պատմեսցէ վասն նորա, եւ կամ ո՛վ մեծացուցանիցէ զնա իբրեւ գիտակ, որ աշխատի եւ ոչ հասանէ»: Քանզի որչափ ջանա ոք հասու լինել, այնչափ եւ¹² յետս Հարկանի յանհետազաւտելի բնութենէն, սակայն զիջանելով գովի յիւրոց արարածոցս: Վայել է մեզ այսուհետեւ յայսմ աւուր յիշատակի երանեալ¹³ Հաւր մերոյ զպարտական զպարտան հատուցանել, ըստ խնդրոյ պաղատանաց ժողովրդեանս: Թէպէտ եւ մեծամեծ ուղղութիւնք առաքինութեանց նորա, մեծագոյնս գովութիւն խնդրէ քան զմեր բանս, բայց մեր զպատճառս առեալ զնորին խոնարհութիւնն, որ կարի իմն քաղցր եւ հանդարտ էր ի վերայ ամենեցուն: Քանզի գիտեմ զնա ըստ երանելոյն Պաւղոսի. «Ընդ ամենայնի ամենայն եղեալ¹⁴, եւ նուազել եւ առաւելուլ» (Փի-

1 Ա Եւ քեզ փառք հանդերձ հարք եւ Սուրբ Հոգւովդ յաւիտեանս յաւիտենից. ամէն] Եւ քեզ ... ամէն Գ Տեսէք ասէ զմարմնաւոր զիմարմն իմ եւ զփրելիս, զի որպէս զանմարմին մարմնչի ի յամալթ անմարմին անկելոցն, իբրեւ ետես զՅիսուս, զի կայր ընդ աջմէ Հաւր, աղաղակեաց եւ ասէ, մի՛ համարիր սոցա զայս մեղս, եւ ընկալ զհոգի իմ առ քեզ: Եւ Անջեաց ի փառս Աստուծոյ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ] Որ կատարեցեր ըզձանս նահատակին քո... ամէն:
 2 Աղբիւրներ.
 Ա = Վեներիկ, ձեռ.248, թ.240 ք0 249թ
 Բ = Վեներիկ, ձեռ. 205, թ.134ա - 140ա
 Խորագիր.
 Ա Երանելոյն Պրոկղի Կոստանդինուպոլսի եպիսկոպոսապետի ներքողեան ի սուրբն Յոհան Ոսկեբերան, ի տիեզերական վարդապետն եւ լուսաւորիչն ամենայն եկեղեցւոյ Քրիստոսի
 3 Բ > բազում տենչանաւք...ստեալ
 4 Բ Յոհաննու
 5 Բ զիմաստուն
 6 Բ բաղձացեալքս

7 Բ մտառութեան
 8 Ա զայնոսիկ] զայն ոսկի
 9 Բ վերնայնոցն] ամբարձայնոցն
 10 Ա > մերում
 11 Բ մերով
 12 Բ > եւ
 13 Բ երանեալ Ոսկեբերանի
 14 Բ լեալ

լիպ. Դ 12): Գիտեմ զնա, որ զամենայն զսիրոյն զառանձնաւորութիւնն նուաճեալ յինքն, եւ վասն այնորիկ երկայնամիտ լինի առ մեզ, եւ քաղցրանայ, եւ ոչ նախանձի, եւ ոչ ամբարհաւածէ, ոչ հպարտանայ, եւ ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, այլ զբազմաց, զի ապրեսցին, այլ եւ ոչ զբազուի, ոչ խորհի զչար, ոչ խնդա ընդ անիրաւութիւն, այլ խնդա ընդ ստուգութիւն:

Արդ, որ¹ զայս ամենայն հանդերձ այլովք եւս սիրոյն կարգաւք ի յինքեան ունի երանելի հայրն մեր, զի² արդ այժմ ոչ եւս ներողագոյնս զիջանիցի առ մեզ: Քանզի սովորութիւն իսկ է բարւոք³ վարդապետաց եւ որդեսէր հարց, զհարագատացն իւրեանց զվաստակս զուարթութիւն ընդունել:

Եւ արդ, սկիզբն արարեալ բացողք զբերանս մեր, եւ նախ զպատուասէրն լեզու զսրբոյ Ոսկեբերանին եւ զմեծի քահանայապետին բարեհամբեսցողք: Եւ զայս առնելով ոչ զի զնորա զփառսն ինչ անեցողցանիցեմք, որ ամենայնիւ առաւելեալն է աստուածայնովք փառաւք: Այլ զի յանձինս մեր զնորա զաստուածային վարդապետութեանցն զփառաւորութիւնսն ձգեսցողք: Զի ամենայն ոք, որ ի սուրբսն եւ յաստուածայինսն աշխատասիրէ, անձինն մանաւանդ երախտաւոր լինի: Եւ զայս ուսանիմք ի սրբոյ մարգարէէն Եղիայէ, եւ ի սարեփթուհոյն, եւ Եղիսէէ, եւ ի սոմնացուոյն⁴: Այլ եւ ոչ զանց առնելի է աւետարանական պատմութեանցն զասացեալսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առ սամարուհին, եւ զգովութիւն կնոջն այրոյ յաղագս երկուս խերեւելին, զոր արկ գանձանակն: Այլ որպէս եւ նոքա մանաւանդ առնուլ արժանաւորեցան քան թէ ընծայեցին: Այսպէս եւ զովանասանութիւնս մեր, որ առ երանելի հայրս մեր է, զմեզ առաւել

1 Բ > որ
2 Բ բարիոր
3 Ա > եւ եղիսէէ եւ սոմնացուոյն

շահեցողցանէ, քանզի այնչափ շրթունք նորա բղխեաց զբանս բարիս, իբրու զի աւրհնեսցի ի նմանէ Աստուած յաւիտեան: Վասն զի ընդ ամենայն տիեզերս պայծառացեալ նորա վարդապետութիւնն, ճշարտապէս շրթունք նորա շարժեալք Հոգևով Սրբով բղխեաց զբանս բարիս⁴: Որոյ եւ լեզուն իսկ⁵ սքանչելոյն այնորիկ դպրի եւ անճառելի երագագիր գրչին արժանացեալ հանդիպեցաւ (հմմտ. Սղմ. ԽԴ 2), եւ սիրտ նորա լցեալ Հոգևով Սրբով պատմեաց զանճառելի զգործս երկնաւոր Թագաւորին: Եւ ո՞վ արդեաւք⁶ իցէ դպիրն երագագիր գրչի, եթէ ոչ Միածին Որդին Աստուծոյ եւ ի Հաւրէ Բանն, որ ոչ իբրեւ դոյզն ինչ գրչաւ առ սակաւ սակաւ ինչ գծեալ, այլ երագակատար գործով իբրեւ⁷ յականք թթիւ հրաշագործեաց զամենայն: Ոչ հրամանաւ եւ ոչ նիւթոյ, այլ ինքնակամ եւ յոչընչէ զամենայնն յաւրիսեաց, վասն զի «ամենայն ինչ նովաւ եղեւ, ասէ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ, որ ինչ եղեւն» (Յովհ. Ա 3): Զնա յինքեան ունէր մեծն այն եւ ոսկէզարդ լեզու հայրն մեր, եւ նովաւ խաւսէր որպէս եւ երանելին Պաւղոս. Զփորձ ինչ, ասէ, խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խաւսի, որ յամենայն սուրբս հզաւրացեալ է ամենայն զաւրութիւն նորա⁸: Նաեւ ի բանալ բերանոյ իւրոյ զՀոգին Սուրբ յինքն ձգէր, ըստ գրեցելումն, եւ պարզ եւ յայտնի բանիւ զխորս աստուածային Գրոց առհասարակ ամենեցուն ճառէր, մինչ գրէթէ զամենեցուն ոգիս ունկնդրողացն ընյր ցնծութեամբ եւ ուրախութեամբ: Իբրու ոչ եթէ տգիտանայր ինչ իմաստասիրել դժուարբաց⁹ բառիւք, այլ ցանկայր զամենայն

4 Ա > իբրեւ զի աւրհնեսցի...զբանս բարիս
5 Բ ի
6 Ա > արդեաւք
7 Ա իբրու
8 Ա > Զփորձ ինչ ասէ խնդրէք...նորա
9 Ա դժուարբաց

Հոգիս լսողացն աւգտեցողցանել: Քանզի կարի իմն փութայր բերել յինքեան զնմանութիւն Հաւրն երկնաւորի, որ զնախախնամողական բարերարութիւնն առհասարակ ամենեցուն վերա ծագէ: Նաեւ աւրինակէր յինքեան զառակսն տէրունական, որ յաղագս սերման վարդապետական բանին, թէպէտ եւ ի չորից մասանց մինն միայն ապրեալ լինէր: Վասն զի եւ ճրագ եղեւ սա բխման¹ լուսոյ Հոգւոյն Սրբոյ ի վերայ աշտանակի եղեալ, եւ զամենայն հաւատացեալս լուսաւորեաց: Քարոզեաց եւ զծածուկ միտս Գրոց Սրբոց ի լոյս եւ ի հրապարակս, զոր իբր յունկանէ եւ ի խաւարէ ի մաքուր միտս իւր ընկալաւ: Ծագեաց զգործս լուսոյ գործոց իւրոց ընդ ամենայն տիեզերս, զոր իբրեւ ետես ամենայն մարդ փառաւորեաց նովաւ զՀայրն նորա² երկնաւոր: Անուշացոյց զամենեսեան աղիւն ճշարտութեան, այլ եւ զբազումս մորմոքեցոյց, որք նեխութեամբ մեղաց ապականեալք էին: Սերմանեաց սերմն բարւոք վարդապետութեան ի յանդաստանս ոգւոց ամենեցուն առ ի³ լուսմն կամաց հարիւրապատիկ արդեանցն արդարութեան շտեմարանի արքայութեանն: Քաղեաց եւ զորոմն հերձուածողացն ի ճշմարիտ եւ յուղղափառ հաւատոյս, եւ մատնեաց զնոսա մշտնջենաւոր հրոյ տանջանացն: Զգեաց տարածեաց զբան վարդապետութեան իւրոյ ընդ ամենայն երկիր, իբրեւ զմանանեխէ զառակեալս ի Տեառնէ, եւ եղեւ հանգիստ եւ հովանի ամենայն իմաստնոց վերացելոց թռուցելոցն յերկրէ: Խմոր եղեւ նա հաւատոյ քարոզութեանն, եւ միացոյց ի հացն կենաց զբազմաչափ բնութիւնս մարդկան: Յայտնեաց զգանձն իմաստութեան՝ զծածկեալն յանդաստանս Սուրբ Գրոց, եւ հարստացոյց նովաւ զքաղցեալսն աստուածայնոցն իմաստից:

1 Ա նա ամեմայն] սա բխման
2 Բ > նորա
3 Ա > ի

Յանկացաւ պատուականին այնմ միայնոյ բազմագին եւ բազմալոյս մարգարտին, եւ վաճառեաց զամենայն զկեանս աշխարհիս եւ զնա ստացաւ, եւ նովաւ լուսաւորեաց զամենայն հաւատացեալս: Զգեաց զուրկան վարդապետութեան իւրոյ ի յընկղմեալսն մեղաւք, եւ վեր ածեաց զնոսա ապաշխարութեամբ ի ցամաք ճանապարհս արդարոց: Աշակերտեաց զինքն աստուածայնոց Գրոց, որ է ճշարտապէս ասացեալ արքայութիւն երկնից, եւ փարթամացեալ նոքաւք, եւ ի գանձանակէ անտի Հնոց եւ նորոց կտակարանաց հարստացոյց զեկեղեցի Աստուծոյ: Ընկալաւ յինքն զհոսանս վտակաց վարդապետութեան Հոգւոյն Սրբոյ, եւ խաղաղացոյց նովաւ զամենեսեան ի կեանսն յաւիտեանից: Բղխեաց որովայն մտաց⁴ նորա զյորդառատ գետս շնորհաց, եւ արդիւնաւորեալ պտղաւորեաց զանդաստանս ոգւոց մարդկան: Սերմանեաց սերմանիս արդիւնաւորս, եւ տնկեաց այգիս ուրախարարս, եւ նոքաւք լցոյց զանգործսն, որք աղքատացեալ էին ի ճշմարիտ իմաստիցն: Եղեւ հովիւ քաջ նմանող վարդապետին իւրոյ, եւ հեզ ձայնիւն իւրով ընտանեցոյց ինքեան զհաւատս իւր՝ ճանաչել զճշմարիտ եւ զուղղափառ զձայն նորա, եւ յաւտարացն փախել ուսոյց, որ են գուպարք հերձուածողացն: Եւ զի՞նչ է ինձ զամենայնն մի ըստ միոջէ ասել, ուր զի ի վեր իսկ անցանէ քան զբանս առատութիւն շնորհաց նորա: Քանզի որպէս եւ դասք սրբոց առաքելոցն ի ժամանակին իբրեւ ընկալան զՀոգին Սուրբ ի ձեռն հրեղէն լեզուացն, յորս բաժանեալ իւրաքանչիւր ոք ի նոսա նստելով ի վերայ լեզուաց նոցա: Եւ ի խաւսելն նոցա զմեծսն Աստուծոյ իւրեանց բարբառովն, մի ձայն աշակերտացն բազում ձայնք լինէին ըստ ազգացն հեթանոսաց՝ յամենայն գաւառաց յԵրուսաղէմ եկելոցն հրէից: Այսպէս ի դէպ է ասել մեզ վասն բարբա-

4 Բ > մտաց

ուոյ վարդապետութեան սրբոյ Ոսկեբերանի հաւրս¹ մերոյ: Վասն զի մի բարբառ շնորհաց Հոգոյն Սրբոյ վարդապետութեան լեզուի նորա լցեալ տարածեցաւ յամենայն ազգս քրիստոնէից, եւ լսելի եղեւ յամենայն լեզուս, ըստ աւրինակի հրեղէն լեզուացն երանելեաց առաքելոցն: Եւ որպէս զնոսին իսկ աշակերտեաց զամենայն տենչաւոս իմաստութեան՝ թարգմանութեամբ աստուածայնոց աւետարանական եւ առաքելական եւ մարգարէական տառիցն: Այլ եւ յորդորական խրատու վարդապետութեամբ եւ ինքնաբանութեամբ Սուրբ Գրոց առածութեամբ զբազում մեղաւորս խաւարեալս ի լուսոյ ճանապարհացն սրբութեան վերածեաց ի լոյսն ապաշխարութեան²: Վասն զի մեծաւ փափագմամբ եբաց բերան ծածուկ խորհրդոց իւրոց, եւ ընկալաւ ի ներքս զՀոգին Սուրբ, եւ դարձեալ բղիսեաց շրթամբք իւրովք զամենայն արդարութիւնս Աստուծոյ: Նաեւ ըստ մարգարէութեանն Դաւթի, որ ի մարմնանալն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի վարդապետութիւն նորա, էջ ի վերայ նորա շնորհ ողորմութեանն Աստուծոյ որպէս զանձրեւ ի վերայ գեղման եւ որպէս զցաւոյ, զի ցաւոյ յերկիր (Հմմտ. Սղմ. ՀԱԾ), որով եւ պտղաբերեցան անդաստանք մտաց ամենեցուն՝ առ ի լրութիւն ի շտեմարանին լուսոյ:

Եւ արդ³, ո՞վ արդեւք կարիցէ պատմել զառատութիւն շնորհացն, որ ի նմա, վասն զի, որպէս թուի ինձ, եթէ եւ դարձեալ մարգարէութեամբն Դաւթի առ նա ասաց Աստուած. «Բաց զբերան քո եւ լցից զդա» (Սղմ. 2 11): Վասն զի ո՞վ այսպէս ի կեանս եւ ի վախճանի լուսաւորեաց զամենեանս, բայց եթէ միայն պատմողն ապաշխարութեան հայրն մեր երանելի բերանն ոսկի, զորոյ եւ զվայելչութիւնն դի-

մաց անդ աղաւտ ինչ առեալ եկեղեցւոյ եւ ըղձալի փափագմամբ խանդաղատեալ գոչէ ասելով. Յոյց ինձ գերեսս քո, զի գեղեցիկ է, եւ լսելի արա ինձ զձայն քո, զի քաղցր է, քանզի որպէս զկերպարանեալ նիւթ ինչ պատուական յոսկւոյ սրբոյ, այնպէս մարմնացոյց ի միտս ամենեցուն զանմարմին բանս Գրոց Սրբոց:

Հռչակաւոր բարբառն, որ ել ընդ ամենայն աշխարհս, ուղղափառն Հնչումն, որ ի ներքոյ⁴ երկնից անդուստ ի վերուստ Հնչեցեալ:

Հոգեւոր փողն յորդորիչն հաւատացելոց՝ առ ի յառնել ի⁵ պատերազմն ընդդէմ սատանայի:

Ճշմարիտ աստուածաբանութեամբ դաւանողն Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն:

Բարի մշակն հաւատոյ, որ խլեաց զփուշն հերձուածողացն եւ սերմանեաց զսերմն ուղղափառութեան առաքելական քարոզութեանն:

Քաջաձայն նուազն եկեղեցւոյ, որ յորդորեաց զմանկունսն, որ Սիոնի յաւրհնութիւն Աստուածութեանն:

Գործարան քնարն Հոգւոյն Սրբոյ, որ ի սաղմոսելն իւրում հալածեաց զլեգէոնն դիւսաց:

Տասնադի միաւորեալք զգայարանք շնչոյ եւ մարմնոյ, որ միացեալ միաւորեցաւ սիրով ի յերգս երկնաւոր Թագաւորին: Անթուլանալի լարապնդեալն միաձայնութիւն, որ հարսնացոյց զեկեղեցի ի միաւորութիւն ի սուրբ Փեսային:

Սրատես եւ սրաթուիչ անքուն ակնն, որ յայտնի թարգմանութեամբ Գրոց Սրբոց դիտաւորեաց ամենեցուն զփրկութիւն:

Բարձրագունիցն խոնարհագոյնն աստիճան, որ զամենեանս վերաբերեաց ի

1 Բ հատր
2 Բ արդարութեան] ապաշխարութեան
3 Ա > արդ

4 Բ Աերքնոյ
5 Բ > ի

բարձրութիւնս երկնից վարդապետութեամբն իւրով:

Նմանակիցն եւ անուանակիցն պատուականութեանն ոսկւոյ, որ զամենեանս հարստացոյց ի փարթամութիւնս անապական գանձուցն:

Գերագոյնն եւ գերահրաշ միտքն, որ զանհասանելի իմաստութիւնս Հին եւ Նոր կտակարանաց յինքն ամբարեաց:

Անճառելի¹ խորհուրդն, որ զառ ի սկզբանցն եւ զյաւիտեանսն ծածկեալսն մեզ աստուածաբանեաց:

Անդաւաճանելի գանձարանն, որ զաղքատացեալ միտս մեր լցոյց:

Ամենալից բուրաստանն, որ զտգիտացեալքս ի պտղոյն կենաց ծառոյն պտղաւետեալ իմաստնացոյց:

Իսկ հերետիկոսացն ըստ գրոյն եղեւ կնքեալ աղբիւր, որք անձամբ անձին կամակորեալք ոչ կամեցան ըմպել զՋուրն կենաց զխաղացուցանողն ի կեանսն յաւիտենից:

Գործասէր եւ քաղցրագործ մեղուն, որ ի խորսիւն աշխատութեանն իւրոյ, քաղրացոյց եկեղեցի սուրբ:

Զուարթատես եւ քաղցրահայեաց ողկոյզն, որ ճմլեաց ի մեզ զուրախարար բաժակ վարդապետութեան Հոգւոյն Սրբոյ:

Պարզամտացն եւ անկատարելագունիցն կաթն կերակուրն, որ զիջանէր առ տղայսն մտաւք, ըստ երանելոյն Պաւղոսի, կատարելոցն եւ ի չափ հասելոցն իմաստիւք խորհրդականն կերակուր, որ աստուածաբանութեամբն իւրով հասուցանէր ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի (Հմմտ. Եփես. Դ 13):

1 Ա անճողոպրելի] անճառելի
2 Բ շար չիք

Շտեմարանապետն շնորհաց Հոգւոյն, որ իմաստութեամբ մատակարարէր յընդունաւոսն զբանն աստուածային:

Աղքատասէր եւ աստուածասէր ողորմութեան քսակն, որ միշտ վառեալ ունէր յինքեան զՋահն ողորմութեան:

Զերմ ախտակիցն եւ ցաւակիցն մեղաւորաց, որ միշտ երաշխաւոր լինէր ի ձեռն ճշմարիտ ապաշխարութեանն ողորմութիւն գտանել, այլ եւ արքայութեան եւ փառաց եւս հասանել:

Արդ եւ դուք, եղբարք, փոքր ի շատէ ինչ գիտուն եղեալ ի մէնջ առաւելութենէ փառաց սուրբ հաւրն մերոյ Յովհաննու, եկայք հետեւեցուք զհետ վարդապետութեան նորա, առցուք ի մեզ եւ զաւրինակ հեղութեան նորա, որպէս զի լիցուք ընդունարան շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Արկցուք ի գործ եւ զաւանդն, զոր ընկալաք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որպէս զի կրկնապատիկ, այլ եւ բիւրապատիկ եւս ընկալցուք ի նմանէ պարգեւս ի փառաւորեալ միւսանգամ զալստեանն նորա, եւ այսպէս միշտ յարագուարճ բերկրանաւք ընդ երանեալ Ոսկեբերան վարդապետին մերոյ եւ ընդ ամենայն սուրբս փառաւորեացուք զնոյն ինքն զՏէր մեր Յիսուս Քրիստոս հանդերձ հարբ եւ ամենասուրբ Հոգւովն յաւիտեանս յաւիտենից. Ամէն³:

3 Հետևում է ճառի թարգմանութեան յիշատակարանը. «Քրիստոս Աստուած ի քո մեծի եւ յախար գալստեանդ դաստորեալ գտորք եպիսկոպոսապետն զթարգմանաղ ճառիցս ընդ երանեալ հայրապետին Յովհանու, ընդ նոսին եւ զմեծանուն, արքայապատի սեաստասն Աւշին հանդերձ կենակցան իրով սրբափրի եւ բարեգարդ զաւակաքն եւ քրիստոսաւեր զաւակաքն. ամէն: Տէր իմ Յիսուս Քրիստոս, եւ զամբարժ աշխատողս արժամատրեալ ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց, եւ քեզ փա՛ղք յանվախճան յաւիտեանս»: